№ 72 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 16 1905 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 16 № 72

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Ընդունվում է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խորին վշտով խոցված Մարիամ Տէր-Մարտիրոսեան, Խաչատուր Բաղդասարեան և Բաղդասար Խաչատրեան Նաւտիկեանցները, Նատալիա Խաչատրեան Բաղչեանց, Եփեմիա Խաչատրեան Մէլիք-Սահակեանցը, Նունէ Խաչատրեան Մարգարեանցը ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին իրանց սիրելի և անփոխարինելի առաջնի ամուսնու, երկրորդի հօրեղբօր և վերջինների եղբօր

ԵԱԳՈՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ ՆԱՒՏԻԿԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 11-ին։ Հոգեհանգիստը կը կատարվի ամեն օր երեկոյեան ժամի 7-ին իր բնակարանում (Ուզօնի փողոց № 20 սեփ. տուն)։ Յուղարկաւորութիւնը 21-ին, հինգշաբթի օրը, առաւօտեան ժամը 10-ից դէպի Մողնու սուրբ Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ (հ. շ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մարդկայնութեան գաղափարը. Խորհրդագրի մշակումը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցողի օրագիրը. Մարդկութեան իդէալը. Վրաց ազնուականութեան ուղերձը. Քրիստոս յարեաւ. Բագուի աղէտի զոհերի օգտին. Գաւառական մի օգտաւէտ գործիչ. Նամակ Վլադիկավկազից. Նամակ Օդէսայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

I

Նոր գաղափարը յայտնվեց աշխարհին շատ համեստ ձևով, անտես առնված ժողովրդի խաւերում։

Նա համեստ էր, բայց նա խօսում էր այնպիսի սկզբունքների մասին, որոնք տանջված մարդկութեան տենչանքներն էին շօշափում։

Նրա դէմ կանգնած էր հին աշխարհի ամբողջ կազմակերպութիւնը, իր սրբագործված աւանդութիւններով. բայց Նա անշեղ առաջ էր գնում յաղթութեան անխորտակելի յոյսով։

Եւ Նա պէտք է անշուշտ յաղթէր։

Որքան մեծ լինէին արգելքներն ու խոչընդոտները, որքան էլ սպառնալի լինէին զրկանքներն ու զոհերը, Նա պէտք է, այնու ամենայնիւ, յաղթէր։

Պէտք է յաղթէր, որովհետև Նա կրում էր իր մէջ համամարդկային տենչանքներ, ընդհանուր բարօրութեան սկզբունքներ։

Եւ Նա յաղթեց։

II

Ի՞նչ էր ասում Նոր-գաղափարը, Քրիստոսի վարդապետութիւնը։

Նա ասում էր, որ մարդիկ հաւասար են, որ արեգակը միատեսակ է լուսաւորում և հարուստին և աղքատին։

Հաւասարութեան սկզբունք։

Նա ասում էր, որ ամեն մարդ պատասխանատու է իր գործի համար, որ ծառը իր պտղից պէտք է ճանաչվի, որ հարուստի համար աւելի դժուար է արքայութիւնը քան, աղքատի համար։

Խղճմտանքի սկզբունք։

Նա ասում էր, որ ազգերի խորութիւնը անմտութիւն և անարդարութիւն է, որ հրէայի և սամարացու մէջ տարբերութիւն չը կայ, որ ընտրեալ և ոչ ընտրեալ ազգեր չը կան։

Ազգային համբերողութիւն։

Նա ասում էր, որ պէտք է սիրել ընկերին իբրև իր անձը և իբրև Աստուծուն, որ պէտք է խնամել տնանկին, քաղցածին, ծարաւին և առհասարակ կարօտեալներին։

Եղբայրութեան սկզբունք։

Նա ասում էր, որ վրէժով չը պէտք է լուծվեն մարդկային յարաբերութիւնները, այլ ներողամտութեամբ և փոխադարձութեամբ, որ աչքի տեղ աչքը չը պէտք է հանել, այլ թշնամու բարեկամը դառնալ և նրան բարեկամ դարձնել։

Համերաշխութեան սկզբունք։

Նա ասում էր, որ բարի գործը պարտաւորութիւն է և որ նրա համար արգելք չէն կարող լինել տէր-դութիւնը, որ բարեգործութեան համար ոչ օր չը կայ։

Ազատ նախաձեռնութեան սկզբունք։

Նա ասում էր, որ պէտք է իսկական գործով զբաղվել և ոչ ցուցամոլութեամբ, որ ձախ ձեռքը չը պէտք է գիտենայ աջի արածը։

Անկեղծ գործունէութեան սկզբունք։

III

Դրանք հասարակական պահանջներ էին, վերաբերեալ մարդկանց կեանքին և յարաբերութիւններին։

Քրիստոսի վարդապետութեան ոյժը նրա այդ հասարակական տարրի, նրա սոցիալական էութեան մէջն էր։

Նա տալիս էր իր ժամանակակից մարդկութեանը մի շարք սկզբունքներ, որոնք մի կողմից պէտք է մաքրէին մարդուն իբրև անհատի, իսկ միւս կողմից նրան միացնէին միւսների հետ, իբրև հասարակութեան անդամի։

Դա մարդկանց վերաբերեալ մի վարդապետութիւն էր և միայն մարդկանց։ Այդ չը պէտք էր երբէք մոռանալ։

Նա չէր շօշափում խոր աստուածաբանական վերացական խնդիրներ, նա չէր խառնվում զուտ փիլիսոփայական նրբութիւնների մէջ, տարերքների էութեան, տիեզերքի կազմութեան և իմացականութեան սահմանների մէջ։ Աստուածաբանները և փիլիսոփաները աշխատեցին շահագործել նրան ուրիշ նպատակների համար և ընկան անվերջ թիւրիմացութիւնների մէջ։

Ոչ, դա սխալ էր, Նրա վարդապետութիւնից կարող էին զարգանալ միայն հասարակական գիտութիւնը և բարոյագիտութիւնը։ Իսկ այդ գործի համար երկար ժամանակ չը գտնվեցին կարող ոյժեր, նպաստաւոր չեղան պատմական պայմանները։ Դա ՃԾՑ մեր օրերին։

IV

Պատմութիւնը չար խաղ խաղաց մարդկութեան Քրիստոսի վարդապետութեան հետ։

Անկարող լինելով դիմանալ նրա յաղթական հոսանքին, կեանքը տեղ տուեց նրա առաջնացութեան և տարածմանը։ Բայց շատ շուտով նրան ենթարկեց աղաւաղումների և այն էլ ինչպիսի սարսափելի աղաւաղումների։ Ով կարող էր կարծել, որ Քրիստոսի անունով աստուածաֆէներ կը սարքվեն, մտքի հալածանքներ կը հրատարակվեն, ստրկութեան կարգեր կը սահմանվեն, մի խօսքով մի գոռ արշաւանք կը կազմակերպվի այն բոլոր սկզբունքների դէմ, որ կտակեց աշխարհին մարդկութեան Քրիստոսը։

Միջին դարերի սարսափը մեր առաջ բացում է մի ողբերգական, սիրտ յօշոտող տեսարան, թէ ինչպէս Քրիստոսի անունով հալածվում էր այն բոլորը, ինչ որ կազմում էր Քրիստոսի վարդապետութեան էութիւնը։

V

Բայց գաղափարը չէր կարող մեռնել։ Այն սկզբունքները, որ նա իր մէջ պարունակում էր, գործում էին ճակատագրական յամառութեամբ և դարձեալ առաջ մղեցին իրանց հրաժայողական պահանջները։

Նոր կեանքը հարստացաւ նոր ձևակերպութիւններով։ Բայց նա այսօր էլ հոգեզմայլութեամբ և երախտագիտութեամբ գլուխ է խոնարհեցնում այն մեծ Քարոզչի առաջ, որ աւետեց աշխարհին մարդկային բարօրութեան հիմնական սկզբունքները։

ԽՆԴՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

—

Հնհափառ Կաթողիկոսի կողմից ուղարկված հոգևոր պատգամաւորութիւնը ներկայացրեց պետական բարձր շրջաններին հայոց եկեղեցու և դպրոցական գործին վերաբերեալ էական խնդիրները։ Դրական որոշումներ մենք դեռ չունենք մեր առջև, բայց գիտենք, որ յարուցած խնդիրները քննութեան պէտք է առնվեն։

Մեր հարևան վրացիները մշակել են և մշակում են իրանց կարիքների ծրագիրներ։ Քութայիսի ազնուականութեան պարագլուխ Մերեթելի ներկայացրել էր մինիստրութեան մի ընդարձակ ծրագիր, որի մէջ քննութեան են առնված վրաց ազգի շահերը շօշափող բոլոր խոշոր հարցերը։ Ներկայումս Թիֆլիսի և Քութայիսի վրաց ազնուականութիւնը մշակում է մի ուղերձ Թագաւոր-Կայսրի անունով վրաց ազգի հիմնական պահանջների մասին։

Մեր միւս հարևանը, մուսուլմանական համայնքը, իր յատուկ պատգամաւորների միջոցով, ներկայացրել է ներքին գործերի մինիստրին խնդրագիր մահմեդականների հերթական պահանջների մասին։

Հայ ժողովուրդը, ցանկանալով թէ փոխարքայ Վորոնցով-Դաշկովին և թէ Մինիստրների Կոմիտէին ներկայացնել մի ընդհանուր խնդրագիր իր կարիքների մասին, նպատակայարմար դատեց մի համագումար ժողով կազմել և ընդհանուր մասնակցութեամբ խմբագրել այդ խնդրագիրը։ Համագումարը տեղի ունեցաւ Թիֆլիսում և սկսած ապրիլի 3-ից մինչև 15-ը, կայացնելով բազմաթիւ նիստեր թէ Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում և թէ ուրիշ բնակարաններում, մշակեց մի շարք որոշումներ։ Ներկայացուցիչները խմբվել էին քսաներկու հայկական կենտրոններից։ Բացի այդ մասնակցում էին համագումարին մամուլի, դասակարգերի, բարեգործական հիմնարկութիւնների, թեմական դպրոցների ներկայացուցիչներ։

Խնդիրների քննութիւնը կատարվում էր թէ ընդհանուր ժողովներում և թէ յատուկ յանձնաժողովների միջոցով, Խնդրագրի բոլոր կէտերը ձևակերպված են, իսկ վերջնական սրբագրութիւնը թողված է մի յատուկ յանձնաժողովի։ Խնդրագիրը կը մատուցվի Կովկասեան Փոխարքային և կուղարկվի Մինիստրների Խորհրդին։

Մենք յոյս ունենք շուտով հաղորդել մեր ընթերցողներին այդ խնդրագրի բովանդակութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XII

Եկաւ Զատիկը, և ես, ինչպէս ընթերցող, երևակայում եմ իմ դասակից ընթերցողի դրութիւնը։ Զատկական նիւթերի ինչ ահագին բեռ պիտի տայ լրագրութիւնը։ Եւ ընթերցողը պիտի կարդայ այդ բոլորը։

Գրուածքներ, տոգորված խունկ ու մոմի հոտով։ Գրուածքներ, որոնք փափուկ ու յուզիչ են իրանց բարի, լաւական տրամադրութեամբ։ Գրուածքներ, որոնց ամեն մի տողի մէջ փայլում—փայլատակում են քրիստոնէական վարդապետութեան ձևակերպած գեղեցիկ բառերը։ Ցիշում էք ինչ սիրուն և սիրելի բառեր—ներողամտութիւն, գթասրտութիւն, սէր, ողորմածութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն, աշխարհի խաղաղութիւն և մարդկանց ազատութիւն։

Բառերի մի երկար շարք...

Տարին երկու անգամ—Ծննդեան և Զատկին—քրիստոնէութիւնը տօնական մեծ հանդէսով ցոյց է տալիս աշխարհին այդ գեղեցիկ շարանը։

Եկեղեցին իր հանդիսաւոր զանգահարութեամբ, շուկան իր պսպղուն, փայլուն առատութեամբ, լրագրութիւնը իր յօդուածներով, պատկերներով, վէպիկներով, ոտանաւորներով գրաւչութեան, փառահեղութեան բոլոր գոյներն են հաղորդում քրիստոնէական սկզբունքներին։

Ամեն ինչ միացած է մարդկային սրտի վրա ազդելու համար։

Ի՞նչ են ուզում այդ սրտից։

Երկու մեծ տօներին հանդէս է գալիս մի հերոս։ Ամեն ինչ—եկեղեցու խօսք, ուտելիք, լրագրական տողեր—խօսում է այդ հերոսի մասին, բարձրացնում է նրան, ցոյց է տալիս թէ ինչ և ինչ վեհ բան է նրան նայելը, նրան հասկանալը, նրա համար մի բանը։

Դա մի վիթխարի հերոս է։ Սովորական ժամանակ, երբ տօնական զանգակ ու ճրագ չը կայ, երբ մարդասիրութիւնը հարիւրաւոր գոյներով ու լոյսերով հրապարակում չէ ցուցահանված, նա, այդ հերոսը, սարածված է քաղաքների ծայրերում, նկուղների, խարխուլ շինութիւնների, շան բոյն անունով մեծարվող բնակարանների աշխարհում։ Տարածված է նա անօգնական, արհամարհված, մոռացված, ինքն իր ճակատագրին թողված։ Եւ հալվում-մաշվում է այդպէս դարերից ի վեր։ Իսկ նրան տեսնող, նրա հետ ապրող մարդկութիւնը ոչինչ չունի նրա համար, բացի միայն տարին երկու անգամ, երկու հանդիսաւոր օրերին միայն, նրան հերոսացնելուց, նրա վիրաւոր, տխուր կերպարանքը ուտող ու վայելող հրապարակին ցոյց տալուց։

Հէն կարգ, հէն ծէս։ Թշուառութիւնը յիշել հոգու փրկութեան համար, երկնքի արքայութիւնը տանող ճանապարհ հարթելու համար։

Ունևորութիւնը աշխարհի տէրն էր և ինքն իր համար գեղեցիկ արտօնութիւններ էր ստեղծում։ Միշտ ինքը ամեն տեղ, ամենքից առաջ։ Եւ այդ արտօնութիւններից մէկն էլ մէն չէ արդեօք, որ տարին մի երկու օր նա վերապահել է իրան մի փոքրիկ նեղութիւն՝ մտածելու զրկվածների, մերկերի մասին...

Ի՜նչ քնքոյշ, ի՜նչ հեշտ ու փոքրիկ նեղութիւն։ Ցիշել ցնցոտիները և յիշել ոչ թէ այն պատճառով, որ ցնցոտիներն էլ աշխարհի տէրը լինելու բոլոր իրաւունքներով են ծնված, այլ լոկ նրանց շահագործելու, նրանց հարստահարելու համար դարձեալ սեփական բարեբախտութեան, եսամոլ հաճոյութիւնների համար...

Այդ «վեհանձնութիւնը» աշխարհը կատարում է տասնեակ դարերից ի վեր։ Հէնց որ հնչում են յայտնի օրվայ զանգակները, հէնց որ օրացոյցը գալիս մի յայտնի թիւ է յայտնում, իսկոյն զգացվում է վիթխարի, տանջված, արիւնոտ հերոսը յիշելու եսամոլ պարտաւորութիւնը։ Պարտաւորութիւն է զատկական գառ ուտել, որպէս զի խաչված գաղափարը ուտողին մասնակից անէ իր երանութեան. նոյնպիսի մի պարտաւորութիւն է, որ սի քանի գրօշ, հացի մի փշրանք գցվի վիթխարի հերոսի առաջ, դարձեալ խաչված

գաղափարի երանութեան իր անձը մասնակից դարձնելու համար։

Իսկ միւս օրերում, տարվայ հարիւրաւոր երկար ու ձիգ օրերում, երբ տօնի խօսք չը կայ և տանջանքն է իր սարսափներով տիրում աշխարհի վրա, ամենքը կոյր ու խուլ են։ Ցնցոտիները մոռացված, արհամարհված մինչև մօտագայ տօնը...

Եւ պահվում էր այդ կարգը իբրև մարդկային միակ հնարաւոր արդարութիւն։ Պահվում էր երկար, քանի որ ցնցոտիները իրանք ընդունում էին, որ ուրիշ արդարութիւն չէ էլ կարող լինել։ Տարածված իրանց դժբախտութեան որջերում, նրանք հալ ու մաշ էին լինում սպասելով այն օրերին, երբ զանգակները կը հնչեցնեն, որ եկել է նրանց հերոսացման օրը։ Ու գետնափորներից դուրս էին սողում նրանք, հանդարտ ու աղաչաւոր, սողում էին դէպի առատութեան հրապարակները, ապարանքները։ Արդեօք մարդիկ տրամադրված են իրանց հոգիներին բարերարութիւն անելու։

Այդ ահաւոր հարցն էր ամենքին տանջում. նա էր միակ վճիռը, որ պիտի լուծէր սոցիալական դարաւոր ահռելի խնդիրը։

Բայց դա լուծում չէր։ Զանգակների, նպարավաճառների, լրագրական բարի տրամադրող ջանքերի ճանաչած միակ միջոցը մի հսկայական անկարողութիւն էր միայն ցոյց տալիս։ Սիրտը չէր կարողանում գրօշանոց բարերարութիւններից դէնը գնալ, որքան էլ բարիքներ էին խոստանում նրան։

Եւ ահա խախտված է դարերի ծէսը։ Բարձրանում է ցնցոտին։ Բարձրանում է իբրև պահանջող, իբրև իրաւատէր։ Նա այլ ևս չէ ուզում կեանքի գծից դուրս նետված լինել, այլ ևս չէ ուզում մնալ իբրև նիւթ բարեսէրների հոգու փրկութեան համար։ Նա ուզում է վերցնել իր բաժինը, գրաւել իր տեղը կեանքի խնճոյքի մէջ։ Եւ դրա համար ոչ սողալու, ոչ աղերսելու, ոչ էլ տօն օրերի խեղճութեան հերոս հանդիսանալու ցանկութիւնն ունի։ Նա հանդէս է գալիս իբրև ոյժ։ Եւ նրան անտես անել այլ ևս չեն կարող անել։

Ու զատկական տօներին երևակայութեանդ առաջ նկարվում է այսպիսի մի պատկեր։ Տօն օր, տօն ամենքի համար։ Խռնված են մարդիկ իրար հետ, ամեն մէկն ունի իր նուաճած բարեկեցութիւնը, ամենքը իրար հաւասար կերպով տօն են կատարում։ Ոչ հին ցնցոտիների հերոսացումը, ոչ գրօշներ մուրալը գոնէ տօնական մի օրվայ ընթացքում խեղճի արտասուքներ սրբելու համար։ Զատիկ է, բայց առանց հոգեսիրական նպատակով կեղեքվող ցնցոտիների Զատիկ։ Ողորմութիւն չը կայ, որովհետև ոչ ոք կարօտ չէ ողորմութեան։ Ի՞նչ ողորմութիւն, երբ կայ մարդկային անսպառ հարստութիւնը իւրաքանչիւրի համար—իրաւունք։ Իրաւունքի վրա յենված ամեն մէկը հպարտ ու բարձրագլուխ, մարդ ասած հասկացողութեան արժանաւորութիւններով զարդարված, ամեն մէկը դուրս է գալիս իր օթեւանից՝ Զատիկ տօնելու համար։

Զատիկ, բայց արդէն նոր, աշխարհին դեռ անծանօթ, միայն լաւագոյն մարդկանց իդէալների մէջ նկարված Զատիկը։

Գալիս է ահա այդ Զատիկը։

Եւ ե՞րբ կը գայ...

Լ.

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԻԴԷԱԼԸ

(Ֆանտազիա)

—

Ժայռի լերկ կրծքին նա շղթայված էր։

Հպարտ գլուխը յենած սուր քարին, նա տարածել էր դարերի զաւակ իր ալիքները։

Դարեր եկել էին, դարեր գնացել, բայց նա շղթայված Կովկասի կրծքին էր միշտ մնացել։

Ցուրտն ու քամին, արևն ու անձրև անվերջ թափվում էին նրա բաց կրծքին։

Անգղները շարան-շարան կանգնած, լափում էին նրա լեարդն ու թոքը։ Լափում էին նրանք, բայց նա չէր մեռնում. յաւիտեան կապված այդ ժայռի կրծքին—նա անմահ էր։

Աճում էր լեարդը, աճում էր թոքը։ Հազիւ կենդանի շունչը վրան էր գալիս, նա նորից հպարտ բարձրացնում էր գլուխը։

Այդ վարկեանները նա հրաշալի էր։ Ոլիմպոսի աստուածներից ամենագեղը, անմահներից ամենաչքնաղը հազիւ թէ նրան հաւասարվէին։

Բայց ահա եկան անգղների պարեր. նստեցին կրծքին, կոցահարեցին, լեարդն ու թոքը պատառ-պատառ, արիւնքամ արին։

Եւ ոլիմպական ու ամպրոպային բռնապետ Զևսը որստաց վերից. «Այդ է պատիժը այն յանդուգն մարդու, որ կուզէ գողանալ կենսատու հուրը ոլիմպիական, որ կուզէ լիներ հաւասար անմահ աստուածների խմբին։ Տանջվիր յաւիտեան՝ ապստամբ, ըմբոստ արարած. այդ է քո բաժինը»։

—

Եւ նա տանջվում է, յաւիտեան տանջվում։

Երբ բռնութիւնը պատել էր աշխարհ. երբ տգիտութեան համատարած սև քողը ծածկել էր ամենքի միտքը. երբ ոչխար ու տգէտ ադամորդիք խարխափում էին երկրագնդի ծով-տարածութեան մէջ. երբ միայն մի խումբ բռնապետներ, գլուխ ունենալով Ամպրոպային Զևս Ոլիմպականին, քամում էին մարդկութեան քրտինքի բիւրեղացած կաթիլները իրանց ձեռքի գիտութեան լոյսի զօրութեամբ,—այդ ժամանակ նա մենակ էր։

Գողացաւ նա այդ անմահ լոյսը, տուեց մարդկութեան, լցրեց նրա ստրկական հոգին բողոքի թոյնով։

Պրոմէթէոսն էր նա, լոյսի ու անհնազանդութեան հայրը։

Սատանան էր նա, Եհովայի դէմ ապստամբ բողոքող ոգին։

Նա տանջվում էր դարեր, բայց չէր զղջում իր արած քայլից։

Ազատել ամբողջ մարդկութիւնը, լոյսի շաւիղ յաւիտենական կարապետ տալ նրան. խլել նրանից շնական հնազանդութեան պարկը և թափել նրա ստրկական սրտում բողոքի թոյնի փրկարար հեղուկը։—Ահա այդ էր նրա գերագոյն մխիթարանքը։

Պատժված, տանջվող ու յաւիտեան տառապանքի ենթակայ՝—նա մխիթարվում էր իր արած հսկայական ծառայութիւնով։

Կովկասի ալէզարդ բարձունքից նա անվերջ դիտում էր աշխարհի անհուն տարածութիւնը, ուր ցրված էր մարդկային հօտը։

Նա հսկում էր ամեն տեղ բողոքի լոյսին և չէր թողնում երբէք նրան հանգչելու։

—

Բայց ահա նա նկատում է այնտեղ, հարաւում, Պալեստինի մի խղճուկ անկիւնում մի նոր տեսարան։

Դարեր եկել են, դարեր գնացել, բայց նա այդպիսի մի նորութիւն երբէք չէ տեսել։

Ցնդում է Պրոմէթէօսն իր ալիքները, լարում իր տեսութեան հուժկու զօրութիւնը։

Եւ նա տեսնում է։

Խոնարհ ու տանջված մի Մարդ են տանում։ Մէջքին կապված է տանջանքի քառաթև խաչը։ Կաթ-կաթ ծորում են քրտինքի կաթիլները նրա խոհուն ճակատից։

Հեզութիւն է քարոզում նա, հնազանդութիւն։ Թշուառները հաւաքվում են նրա շուրջը, մխիթարում, ապագայի յոյսով հրճվում։

Հալվում է Բողոքը Նրա խօսքի զօրութեան տակ։ Ոչնչանում է մահկանացու մարմինը Նրա ներշնչած հաւատից։

Բացվում է երկինքը։ Այս անգամ էլ հընչում է Երկնքի միահեծան տէր Եհովայի ձայնը. «Դա է Որդին իմ սիրելի։ Դրան լսեցէք»։

Ծունկի են գալիս ժողովուրդները, աղօթում Նրան։ Նրա մեծ խօսքը շուտով շրջան է անում արար աշխարհում։ Հէզերները, ուժեղները, աշխարհի տէրը, Զևսն ու Եհովան նըստում են Նրա կրօնի տարածվելուն։

Ճմլվում է ծով-սիրտը Պրոմէթէոսի, երբ տեսնում է Բողոքը փոքրացած, ազատութեան ըմբոստ ոգին հանգչելիս։

Բայց անցնում է վարկեանը և նա նորից տեսնում է իր սերմերը աճելիս։

«Ո՜չ, Նազովրեցի, ասում է նա իր մտքում, իմ լոյսն է զօրեղ, իմ բողոքն է աւելի կարող, քան Քո հնազանդութիւնը։ Զօրեղները միշտ Քո կողմը կը բռնեն, Քո խօսքը կը քարոզեն, բայց ճնշվածներն ու հալածվածները միշտ իմ հետևորդները կը լինեն»։

Եւ անցել են երկու հազար երկար ու ձիգ տարիներ, բայց Բողոքը դեռ չէ մեռել։ Տարածված Հնազանդութիւնը նորից սկսել է տեղի տալ։

Բողոքն է որ աճում, աճում, հզօրանում է։ Նրանն է ապագան։ Նա է վաղվայ զաւակը։

Բողոք անարդարութեան դէմ, բողոք անմահ Լոյսը ծածկող Զևսի դէմ։

Բողոքը ճանապարհն է, լոյսը, իդէալը։

Խաժակ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՐՁԸ

—

Քութայիսի վրաց ազնուականութիւնը իր ապրիլի 11-ի նիստում միաձայն որոշել է ընդունել մի ուղերձ, որ համապատասխանում է Թիֆլիսի ազնուականութեան նոյնատեսակ ուղերձին։ Ահա նրա բովանդակութիւնը։

«Թագաւոր, Ձեր Կայսերական Մեծութեան բարձր հոգատարութիւնը բոլոր հպատակների բարօրութեան համար, առանց ազգութեան և կրօնի խտրութեան, արտայայտվեց Կառավարչական Սենատին տրված Անուանական ուկազի և ներքին գործերի մինիստրին 1905 թ. փետրվարի 18-ի բէսկրիպտի մէջ։ Քութայիսի նահանգի վրաց ազնուականութիւնը, հասկանալով այդ պատմական ակտերի բոլոր կարևորութիւնը, թեթևացած սրտով հանդիպում է նրանց, առաջին անգամ յոյս ստանալով, որ շուտով կիրագործվեն վրաց ազգի սպասելիքները նրա գոյութեան համար ազատ ներքին ինքնավարութեան պայմաններում, որոնք հիմք ծառայեցին Վրաստանի կամաւոր միացման համար հաւատակից Ռուսաստանի հետ։ Թափանցված եղբայրական ռուս ազգի հետ միասին մի ձգտումով յօգուտ ռուսաց ազգի բարօրութեան և նրա հետ միասին բաժանելով հաստատ վստահութիւն, որ մօտ է այն օրը, երբ ամբողջ ռուս հողի ազատ ընտրված ներկայացուցիչները կը զբաղվեն Ռուսաստանի և նրա ծայրերկիրների բարեկարգութեամբ, Քութայիսի նահանգի վրաց ազնուականութիւնը, համերաշխ Թիֆլիսի նահանգի վրաց ազնուականութեան ամենահպատակօրէն ուղերձի մէջ յայտնված ցանկութիւնները հետ, իր սրբազան պարտքն է համարում յայտնել խորին համոզմունք, որ վրաց ազգի և նրա խաղաղ կուլտուրական զարգացման համար միակ ճշմարիտ միջոցը կարող է լինել—ճանաչել իրաւունք Վրաստանի համար, որ բաղկացած է Թիֆլիսի, Քութայիսի և Բաթումի նահանգներից, Սուխումի և Զաքաթալի շրջաններից, կառավարվելու այնպիսի օրէնքներով, որոնք սահմանված կը լինեն տեղական պատգամաւորական ժողովի ձեռքով, ընտրված հանրային ուղղակի, գաղտնի և հաւասար ձայնատուութեան հիմքի վրա ամբողջ Վրաստանում։ Վրաց ազնուականութիւնը, արկանելով առ ոտս Ձեր Մեծութեան ներկայ ուղերձը, խորապէս թափանցված է գիտակցութեամբ, որ շնորհելով վրաց ազգին ներքին ինքնավարութիւն՝ կատարված կը լինի մեծագոյն արդարութեան մի ակտ, համապատասխանող թէ ընդհանրապէս մարդասիրական հայեացքներին ազգային ոյժերի ազատ զարգացման մասին, և թէ պատմական հիմունքներին Վրաստանի այն կամաւոր միացման Ռուսաստանի հետ, որ սրբազրված է Ձեր, Ամենաողորմած Թագաւոր, Թագակիր Նախահայրերի կողմից»։

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ

(Շէղբինից)

—

Ասացէք ինձ, ինչի՞ այս գիշեր օդը միշտ այսպէս տաք ու հանդարտ է լինում, ինչի՞ երկնքում վառվում են միլիոնաւոր աստղեր, ընութիւնը պճնվում է ցնծագին, ինչի՞ իմ սիրտը կարծես ճխում է լիուլի ուրախութիւնից, ինչի՞ արիւնս հոսում է դէպի կոկորդս, և ես զգում եմ, որ, կարծես, տարվում եմ ինչ որ մի անբերևոյթ ալիքով։

«Քրիստոս յարեաւ!» հնչում էին զանգակները, որոնք յանկարծ զօղանջեցին քաղաքի բոլոր անկիւններում. «Քրիստոս յարեաւ!» խոխոջում են սարից դէպի ձորակը հոսող առուակները. «Քրիստոս յարեաւ!» ասում են տաճարների գմբէթները, որոնք յանկարծ լուսավառվում են. «Քրիստոս յարեաւ!» սիրալիր կերպով շշնջում են յաւիտենական կրակները, որոնք վառվում են խորունկ ու մթին երկնքում. «Քրիստոս յարեաւ!» արձագանք է տալիս վաղուց անցած գնացած իմ անցեալը։

Ես դեռ երէկ որոշ կերպով լսեցի, որ՝ հարաւից նոր վերադարձած՝ արտոյտը իր աշխոյժ ու անոյշ երգով աւետեց այդ պանծալի լուրը, որից իմ սիրտը միշտ բաբախում է մի տեսակ նրբազգաց յուսով։ Դեռ երէկ նկատեցի, որ վաճառականի կին բարի Պելագէա Իվանօվնան հոգս էր քաշում, չարչարվելով՝ անթիւ, անհամար պասքաներ էր պատրաստում, հարիւրաւոր ձուեր ներկում և խմորի մէջ խոզի ապուխտ տասնեակներով տապակում։

—Չէ՞ որ ձեզ համար շատ է այդքան պասքան, Պելագէա Իվանօվնա,—հարցրի։

—Բոլորը «քամբաղդների» համար է,—պատասխանեց նա՝ բարեպաշտութեամբ երեսը խաչակնքելով։

Սարսափելի սիրում եմ այդ Պելագէա Իվանօվնային։ Նա խիստ որ յարգելի կին է։ Բանտարկեալներին է նա «քամաղդներ» անուանում, և, կարծեմ, իր ամբողջ կեանքը նուիրել է այն բանին, որ մի կերպ մեղմացնէ բանտի նեղութիւններն ու դժանութիւնը։ Նա չէ հարցնում, թէ ով է այն բանտարկեալը, որին իր ձեռքը ողորմութիւն է տալիս յանուն Քրիստոսի,—աւազակ է, գող կամ թէ լոկ «խառնված է» գործի մէջ։ Նրա աչքում նրանք ամենքը միայն «քամբաղդներ» են, և ահա ամեն կիրակի օր նրա տանից ամբողջ կապոցներով կալաչներ, պուդերով տաւարի միս և ձուկ է ուղարկվում, և «քամբաղդները» օրհնում են Պելագէա Իվանօվնայի անունը և նրան անուանում են «ծնող մայր» կամ «կերակրող»... Եւ ես այն կարծիքի եմ, որ եթէ այս աշխարհում եղել են երկնքի արքայութեան արժանացողներ, ի հարկէ, Պելագէա Իվանօվնան ամենից շատ արժանի է։

Դեռ երէկ երեկոյեան ես զգացի, որ քաղաքում ինչ որ անսովոր բան է կատարվում։ Տաներկուսին մօտ բոլոր պատուհաններում կրակ երևաց, ապա բոլոր փողոցներով ժողովուրդը սկսեց անցնել, կառքերը դղրդացին։

Ես էլ մի առանձին, ինձ համար վաղուց անսովոր, խնդագին զգացմունքով լսեցի առաւօտեան ժամերգութիւնը և եկեղեցուց հեռանալով՝ դուրս տարայ ինձ հետ ընկերութեան, ողորմածութեան և ներողամտութեան պայծառ զգացմունք։

«Քրիստոս յարեաւ»—մտածում էի ես։ Նա յարութիւն առաւ ամենքի համար. մեծ ու փոքր, յոյն ու հրէայ, ուշ ու վաղ եկածներ, իմաստուն ու յիմար, հարուստ ու մուրացկան—մենք ամենքս հաւասար ենք Նրա յարութեան առաջ. մեր ամենքիս առաջ կանգնած է այն սեղանը, որ պատրաստել է յաղթանակը մահի դէմ։

Իզուր չէ ժողովուրդը այն կարծիքի, թէ յարութեան տօնին մեռած մեղաւոր մարդու հոգին մարվում է մեղքերից ու տարվում արքայութիւն։

Կարելի՞ է մահվան գաղափարը ընդունել այն օրը, երբ ամեն բան խօսում է կեանքի մասին, ամեն բան կեանքի կոչ է անում։ Ես սիրում եմ այդ ժողովրդական հաւատալիքները, որովհետև նրանք՝ բացի բանաստեղծական զգացումից՝ լի են նաև պայծառ, հանդարտացնող սիրոյ զգացումով։ Չը գիտեմ ինչի, բայց երբ նայում եմ աշխատաւոր ամբոխին, որը իր ճակատի քրտինքով է իր հացը վաստակում, միշտ մտածում եմ. «Ո՜րքան փառաւոր կը լինէր մեռնել այդ մեծ, հանդիսաւոր օրը!»

Նա յարութիւն առաւ և ձեզ համար, թշուառ կալանաւորներ, կեանքի ծովի չը ճանաչված ճամբորդներ։ Այն Քրիստոսը, որ իջաւ դժոխքը, ձեր սրտերի մէջ էլ մտաւ և մաքրեց նրանց իր սիրոյ հնոցում։ Մենք ամենքս եղբայրներ ենք, մենք ամենքս անմեղ ու մաքուր ենք՝ ամեն բան ներող ու փրկարար սիրու ձայնի առաջ... Գրկախառնվենք ուրեմն և մեր ամբողջ էութեամբ գովենք. «Ընկերներ! Եղբայրներ! Քրիստոս յարեաւ!»

Նա յարութիւն առաւ և քեզ համար, խեղճ աշխատաւոր! Բարի իշխանաւորը հրամայել է, որ բոլոր աստիճանաւորներին նպաստ տան տօնների պատճառով—և ահա քո սեղանի վրա էլ երևում է կարմիր պասքա և մօտը հորթի միս։ Մեծ չէ քո անկիւնը, քո չքաւորութիւնը չէ խնդացնում ոչ ոքի հայեացքը, սակայն այդ օրը քո աղքատիկ սենեակն էլ լուացած ու սրբած է տօն օրվայ պատշաճ ձևով, երեխաներդ հագած են չթից կարած մաքուր վերնաշապիկներ, իսկ կինդ հպարտութեամբ մտնում է գալիս չափազանց շատ օսլայած շրջազգեստով։ Քո երեխաները անդադար մօտենում են կարմիր պասքային կամ հրապուրիչ հորթի մսին. նրանք անհամբեր սպասում են, թէ այդ փառահեղ բաները ե՞րբ պիտի իրանց բաժինը դառնան։ Բայց դու գուրգուրանքով զսպում ես նրանց անհամբերութիւնը. դու գիտես, որ այդ օրը քեզ մօտ թաթախվելու պիտի դան քեզ պէս ուրիշ աշխատաւորներ, որոնք, կարելի է, նպաստ չեն ստացել. քո սիրտը այդ օրը ամենի համար բացվում է. դու սիրում ես, և վշտանում ես, որ չես կարող ամենքին յագեցնել յանուն Փրկիչ Քրիստոսի։

Նա յարութիւն առաւ և քեզ համար, հասարակ չուխաւոր գիւղացի! Նա կրկնակի յարութիւն առաւ քեզ համար, որովհետև դու ամբողջ տարի, քրտինք թափելով մայր հողի վրա՝ փառաբանում էիր նրա անունը. որովհետև դու ամբողջ տարին աշխատել ես, սպասել և շարունակ մտածել. «ահա՛ կը գայ Քրիստոսի պայծառ յարութեան տօնը, և ես կը

հանգստանում նրա սուրբ հովանու տակ!» Եւ դու կը հանգստանաս, որովհետև դաշտում դեռ վազում են ուրախ առուակները, որովհետև մայր գետինը դեռ նոր է բացվել, և ոչինչ դեռ չէ հրաւիրում դէպի դաշտ, ո՛չ քո արօրը, ոչ էլ քո յաժառ աշխատանքը!

Ամենքի համար Քրիստոս յարեաւ! Մենք ամենքս, մեծ ու փոքր, հարուստ ու աղքատ, հրէայ ու յոյն, մենք բոլորս վեր կենանք և անկեղծ սրտով գրկախառնվենք միմեանց հետ։

Թարգմ. Սալլիւմեան

ԲԱԳՈՒԻ ԱՂԷՏԻ ԶՈՀԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք՝ 1) Իւզօվկայից Կ. Շատիկեանի նախաձեռնութեամբ հաւաքած 106 ռուբլի 81 կ., 2) Վարշավայից Մ. Եարգուլեանի ձեռքով հաւաքած 90 ր., 3) Լևոն Ղազարեանից (Զանկլու գիւղից) 10 ր., 4) Զարջուից Կ. Միրզոեանից 2 ր., 5) Ռոստաեանից (Զարջուի) 3 ր., 6) Մ. Սաղեանից (Զարջուի) 5 ր., 7) Մանթաշեան և ընկ. 1 գործարանի մի մասի բանուորներից Փ. Փափազեանի միջոցով հաւաքած 10 ր. 65 կ., 8) Նիժ գիւղից (Նուխու գաւառ) ուտիախոս հայ լուսաւորչականներից նոյն գիւղի 4 եկեղեցիների քահանաների օգնութեամբ 50 ր., 9) Տաշկէնտից Գէորգ Մէլիքեանի միջոցով հաւաքած 62 ր. 50 կ., 10) Կազանժիկ կայարան (Անդրկասպեան երկիր) մի բուռն հայերից ժողոված Ս. Սարգսեանի միջոցով 15 ր.։ Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 27,560 ր. 90 կոպէկ։

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՄԻ ՕԳՏԱՒԷՏ ԳՈՐԾԻՉ

Անցեալները հիւանդութեան պատճառով վերջնականապէս թողեց իր պաշտօնը Գանձակի գաւառի հաշտարար դատաւոր Նիկողայոս Նազարեան Մէլիքեանցը, որ վարել է իր պատասխանատու պաշտօնը մեր գաւառում մօտ քսան տարի։ Գ. Մէլիքեանցը տարել է իր պաշտօնը միշտ մեծ բարեխղճութեամբ, ազնուութեամբ ու անսպառ եռանդով. նրա գործունէութիւնը միշտ տոգորված է եղել անկեղծ սիրով դէպի գործը, դէպի արդարադատութիւնը ու դէպի այն ժողովուրդը, գիւղական ամբոխը, որին նա ըստ իր պաշտօնի ծառայում էր. բայց ծառայում էր ոչ միմիայն ըստ պաշտօնի, այլ և ներքին անկեղծ համակրութիւնից դրդված, համակրութիւնից դէպի գիւղական խաւար ժողովուրդը, որը միշտ արդարադատութեան բարիքների ծարաւ է զգացել ու զգում է։ Գ. Մէլիքեանը միշտ լիովին յագեցրել է այդ ծարաւը իր դատարանում, և նա կարողացել է այդ անել ոչ միայն իր բնածին դատաւորական ձիրքի, տաղանդի շնորհով, ոչ միայն օրէնսդրութեամբ, այլ և այն բանի, որ նա իրբև տեղացի մարդ, բաղ գիտէ տեղական լեզուները, հայերէնը և թուրքերէնը, գերազանցօրէն ծանօթ է տեղական ազգերի բարքերի, սովորութիւնների ու ադաթների հետ։

Գանձակի ու նրա լայնածաւալ գաւառի իւրաքանչիւր անկիւնի հետ նա ծանօթ է. ամենայետնկած գիւղն ու ղշլաղն անգամ նրան ծանօթ են. ճանաչում է գիւղական գործիչներին, գիւղի լաւ ու վատ մարդկանց. ինչ ցաւեր, ինչ կարիքներ ունեն գիւղերը, ինչ պակասութիւններ կամ ինչ առաւելութիւններ ունի այս կամ այն գիւղական համայնքը, այդ երբէք անծանօթ չէ եղել Գանձակի գաւառի հաշտարար դատաւորին, և նա շնորհիւ այդ բոլորի, միշտ կանգնած է եղել իր պատասխանատու կոչման բարձրութեան վրա. թէ հայ, թէ թուրք գիւղացին իր սիրելի դատաւորի, «Պուլունց սուդիի» (այդ անունով է պ. Մէլիքեանը աւելի յայտնի ամբոխին), «մրօվի աղի», կեանքն ու արևը օրհնելով է հեռացել դատարանից։

Գ. Մէլիքեանին իւրաքանչիւր ոք իր ցաւը իր լեզուով է յայտնել. քսան տարվայ ընթացքում նա մի անգամ գոնէ թարգմանի օգնութեան չէ դիմել, քանի որ կարիք չէ ունեցել, թէ գանգատաւորը, թէ վկան անմիջապէս խօսել են դատաւորի հետ, խօսել են առանց ահաբեկվելու, խօսել են իրբև հարազատի, ամենամօտիկ սրտացաւ մեծաւորի հետ. իւրաքանչիւրը գործ է ածել առանց քաշվելու ոչ միայն իր լեզուն, այլ և իր տեղական ոճը։ Զովդառ գիւղի բնակիչը իր ոճը, Մանաշէթի, Էրբղլի (Ղարաբաղին սահմանակից) բնակիչը իր, և ժողովրդասէր դատաւորը հասկանալի է նրանց, նոյն իսկ խօսեցել է յաճախակի նրանց ոճով ու այդպիսով հնարաւորութիւն է տուել ասել նրանց ամեն ինչ։

Թարգմանը, որի գոյութիւնը վաղուց է չարիք ճանաչված կովկասեան դատարաններում, գոյութիւն չէ ունեցել այդպիսով Գանձակի գաւառական դատարանում պ. Մէլիքեանի օրով։ Գիւղացին դիմում էր նրան միշտ հաւատով, իմանալով, որ կարող է իր ցաւը հեշտ բացատրել, հեշտ հասկացնել, հասկացնել ոչ միայն առանց թարգմանի, այլ և յաճախակի առանց փաստաբանի օգնութեան ու արդարադատութիւն գտնել։

Գ. Մէլիքեանը այնքան բարձրացրել էր ժողովրդի աչքում արդարադատութեան ու դատարանի պրեստիժը, այնքան խոր հաւատ էր ներշնչել դէպի իր անձնաւորութիւնը, իր անաչառութիւնը, որ հազուագիւտ դէպքերում էին միայն նրա դատարանը փաստաբան տանում. «մեր սուդիին ատվակատ չի պէտքը, որ նա արդար դատաստան անի. նա ինքը Սողոմոն իմաստունն ա. դուռ ա, նհախ բան ա ատվակատի վրա փող խարջիլը»—ասում էին սովորաբար գիւղացիք։ Գ. Մէլիքեանի ժօտ վկաների էլ այնքան կարիք չէր զգացվում. նա բարոյապէս այնչափ կարողանում էր ազդել ամբոխի վրա, այնքան խորն էր թափանցում նրանց սրտի ու հոգու մէջ, որ շատերը չէին կարողանում ծածկել նրանից ճշմարտութիւնը ու խոստովանում էին, իբրև մի խոստովանահօր, այլ ոչ դատաւորի, իբրև բարեացակամ ու սրտացաւ խոստովանահօր։ Պրոֆէսիոնալ գողերն անգամ անձնատուր էին լինում նրան ու զղջալով խոստովանում իրանց մեղքերը։

Գ. Մէլիքեանը հաշտարար դատաւոր էր այս բառերի ամենալայն, ամենավեհ մտքով. երբ լուրջ գործեր էին սկսվում, մեծ, քայքայիչ վէճեր էին ծագում գիւղացիների կամ գիւղական համայնքների մէջ, նա անձամբ գնում էր գիւղերը, լուծում, վճռում տեղն ու տեղը հարցերը, վերջացնում գործերը տեղական խելացի տարրերի աջակցութեամբ. նա դիմում էր աւելի բարոյական պատիժների օգնութեան. բանտի, տուգանքի օգնութեան ծայրայեղ դէպքերում էր դիմում. առաջի տեսակի պատիժները աւելի գերակշռում էին նրա գործավարութեան մէջ։ Ցայտնի քաղաքականութեան ներկայացուցիչները, քաղաքականութեան, որը այնպիսի կտրուկ կերպով ու հեղինակօրէն դատապարտված է Կովկասի այժմեան փոխարքայի կողմից, վերջի տարիներս ծուռ աչքով էին նայում Ն. Ն. Մէլիքեանի օգտաւէտ գործունէութեան վրա, շատ ծուռ աչքով... Նա չը կարողացաւ տանել այդ քաղաքականութիւնը, ենթարկվել, համակերպվել նրա անհեռատես պահանջներին։ Այժմ Գանձակի գաւառի դատարանում տիրում, իշխում է թարգմանը. քանի որ նոր դատաւորը տեղական լեզուներից ոչ մի բառ անգամ չէ իմանում... Գիւղացիները նայում են դատաւորին ու ցաւելով յիշում ժամիկ անցեալը, որը մի տեսակ երազ է նրանց համար...

Գանձակի գաւառի գիւղական հայ ու թուրք ժողովուրդը երբէք չի մոռանայ իր սիրելի դատաւորին, իր անկեղծ բարեկամ Նիկողայոս Նազարեան Մէլիքեանցին, որին կը յիշէ միշտ խորին երախտագիտութեամբ։ Այդ ժողովրդի կողմից պարտք եմ համարում յայտնել նրան սրտագին շնորհակալութիւն։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ

Ապրիլի 12-ին

Շէյթանը հանգիստ չունի։ Հիւսիսային Կովկասն էլ չը վրիպեց նրա աչքից։ Երէկ Կիսլովոդսկի ժողովարանումն էր «ուսանողներին ու հայերին» հայրենիքի երդուեալ թշնամիներ, ներկայ դժբաղդութիւնների միակ պատճառներ յայտարարում, այսօր տեղիս «Терскія Вѣдомости» թերթումն է իր ճիւաղ դէմքը ցոյց տալիս, վաղն էլ ով գիտէ՝ որտեղ և ինչ դիմակի տակ կը յայտնվի։ Փոյթ չէ, թէ դրանով ինչ չարիք է դիւթվում. պղտոր ջուր է հարկաւոր. և նա ձգտում է դրան բոլոր ուժով, իր դիւային հոգու ամբողջ թափով։ Կիսլովոդսկում նա ջախջախվեց, դիմակազուրկ եղաւ. վրդովված ռուս հասարակութիւնը նահանգապետի միջոցով բողոքեց Կովկասի պետի օգնականին այդ յայտարարութեան դէմ—ինչ հոգս. նա այստեղ, Վլադիկավկազում կը փորձէ. այստեղ էլ չեղաւ, երբորդ, չորրորդ տեղը կայ. պարզամիտ մարդիկ շատ... Բայց պատմեմ եղածը։

Քաղաքից դուրս, գերեզմանատներին կից մի շատ գեղանիստ դաշտ կայ, ուր կիրակի օրերը զբօսնողների ահագին բազմութիւն է լինում. այդպէս էր նաև ամսիս 10-ին, կիրակի օրը. կային ամեն ազգից, սեռից ու հասակից. մեծ էր մանուկ երեխաների թիւը։ Ժամի 4 ի մօտերը յանկարծ մի անսպասելի իրարանցում առաջ եկաւ և երևացին աջ ու ձախ սլացող կօզակներ։ Շփոթութիւնը մեծ էր, իրարանցումն ահագին. երևացին նոյն իսկ արիւնվայ դէպքեր. հեշտ է երևակայել զբօսնողների, մանաւանդ կանանց ու երեխաների դրութիւնը։ Այս բոլորի մէջ եղած հայերի դերը միայն լեղապատառ փախուստն էր։

Եւ ահա այսօր, ի զարմանս ոչ միայն հայերիս, այլ և բոլոր զբօսնողների, տեղիս «Терскія Вѣдомости» թերթում կարդում ենք. «Կիրակի, ամսիս 10-ին, Վլադիկավկազում, գերեզմանատան ետևում, հայերից կազմված ամբոխը, չուզելով հնազանդվել կօզակների պահանջին՝ ցրվել, նրանց հետ կռիւ սկսեց, սակայն վրա հասնող օսերի դիվիզիոնի ձիաւորները, կամաւորները և թաղերի ռուսները օգնեցին և ամբոխը ցրվեցին. դէպքի տեղը եկաւ ոստիկանութիւնը»։

Ամենքի զարմանքն ու զայրոյթն այսպիսի խեղաթիւրման դէմ իրար խառնվեց. շէյթանն այս անգամ էլ ամօթահար մնաց. քաղաքային վարչութեան երէկվայ նիստում ձայնաւորներ Ֆուվիշևիչ և Ղասումեան բողոքեցին այս յայտարարութեան դէմ և խնդրեցին քաղաքագլխին անմիջապէս ներկայանալ շրջանի պետին և խնդրել ճշմարտութեան պարզումն խիստ քննութեան միջոցով. առաջարկութիւնն ընդունվեց բոլոր ձայնաւորներից։

Հաւատացած ենք, որ գեներալ Տօլստովը, որի սրտին այնքան մօտ է հաւասարաչափ դրացիութեան գաղափարը, կը վերականգնէ ճշմարտութիւնը և հայերի վրայից կը բարձվի այս զրպարտութիւնը, սակայն... չարութեան հետքն այնուամենայնիւ կը մնայ։

Ամօթ շէյթանին։

Օտարական

ՆԱՄԱԿ ՕԴԵՍՍԱՅԻՑ

Ապրիլի 6-ին

Կիրակի, ապրիլի 4-ին, տեղիս հայոց աղօթատանը հոգեհանգիստ կատարվեց վաղամեռիկ Քրիստաֆոր Մէքայէլեանի յիշատակին։ Երկսեռ մի հոծ բազմութիւն, մի խումբ բանուորներ և բազմաթիւ զինուորներ լցվել էին եկեղեցի յարգելու անգնահատելի հասարակական գործիչի յիշատակը, որ շատ քչերն են թողնում հայ հասարակական գործիչներից։

—

Օդեսայի հայոց Աղքատախնամ Հոգաբարձութիւնը հրատարակեց իր գործունէութեան 1904—1905 տարեկան տեղեկագիրը։ Հոգաբարձութիւնը հետզհետէ ծուլանում է, որ աւելի քան պախարակելի է։ Նա մինչև այժմ չը կարողացաւ իր ազատ դրամագլուխը խելացի կերպով շահեցնելու միջոցը գտնել։ Երևակայեցէք մօտ 9000 ր. կանխիկ դրամ, որը բերում է 3½%։ Բայց չէ՞ որ կարելի էր այդ գումարը շահեցնել այնպէս, որ նա բերէր 6, 7 և նոյն իսկ 10 տոկոս։ Եղաւ այդ մասին նախկին ընդհանուր ժողովներից մէկում առաջարկութիւն, որը սակայն մինչև այժմ հոգաբարձութիւնը անուշադիր թողեց։

Անցեալ տարի հոգաբարձութիւնը նոյն իսկ չը տուեց իր սովորական հայկական երեկոյթը, որը նա տալիս էր ամեն տարի և որից գոյացած արդիւնքը նրա ամենամեծ եկամուտներից մէկն էր կազմում։ Նա գնեց տեղիս քաղաքային թատրոնի դրամատիկական ներկայացումներից մէկը 600 ռուբլով։ Թատրոնի ընդհանուր մուտքը մօտ 2000 ր. է, ծախսելով և նուէրներն էլ հաշված, նա ունեցաւ մօտ 1200 ր. զուտ արդիւնք։ Դա ի հարկէ շատ հեշտ է. ներկայացման աջողութիւնը նրան ոչ մի անհանգստութիւն չէր պատճառի. խաղում էին Իբսէնի նշանաւոր «Женщина съ Моря» դրաման այնպիսի տաղանդաւոր ոյժերով՝ որպէս Պասխալովա, Լիւդվիգով, Բագրով և այլն։ Մնում էր ծախել տոմսերը՝ որը նոյնպէս ոչ մի դժուարութեան չէր հանդիպի այդպիսի նշանաւոր ներկայացման համար։

Հայկական երեկոյթի թողած բարոյականը աչքի առաջ չէ առնվում... Հոգաբարձութիւնը միայն նիւթական աջողութիւն է որոնում, բայց չէ՞ որ հայկական երեկոյթները մինչև այժմ բարոյականի հետ ունենում էին և բաւականին չաղ նիւթական աջողութիւն։ Այո, բայց նա աշխատանք է պահանջում...

Իսկ ծոյլերը աշխատել չեն սիրում...

—

Երէկ, ապրիլի 4-ին, տեղիս «Գարժանի» թատրոնում դերասան պ. Վրոյրը, դերասանուհի տիկին Զարուհու, դերասան պ. Աբրահամեանի և տեղական սիրողների մասնակցութեամբ տուեց հայերէն ներկայացում—հազարդէպ երևոյթ Օդեսայում։ Ամեն կողմից խրախուսանքի և գովասանքի արժանի է պ. Վրոյրի ձեռնարկութիւնը։ Նա ունեցաւ այստեղ բարոյական և նոյն իսկ նիւթական աջողութիւն։

Խաղի մասին աւելորդ եմ համարում խօսել. ո՞վ չը գիտէ Վրոյրին։ Նա շրջապատվել էր մի խումբ սիրողներով, որոնք ամենայն բարեխղճութեամբ վերաբերվելով իրանց պատասխանատու գործին, հիանալի կերպով տարան իրանց դերերը։

Ուսանող Հ. Եղիազարեանը խաղում էր, որպէս փորձված դերասան։ Գովելի էր մի քանի երիտասարդների անձնուէր աշակցութիւնը, որոնց ջանքերը ապարդիւն չանցան՝ նիւթական աջողութեան տեսակէտից։ Խաղացին «Դոն-Գրիգորիո» և «Ադամ և Եւա» պիէսաները, որոնք հանդիսացան միանգամայն յարմար մեր օտարախօս գաղութի համար և մատչելի՝ վերնայարկը լցված բազմաթիւ բանուորների և զինուորների համար։ Պ. Վրոյրը իր մտածված խաղով ոգևորութեան հացրեց հասարակութեանը, որը և պարգևելով նրան մի փոքրիկ դրամական նուէր, գոհ սրտով հեռացաւ թատրոնից հազար շնորհակալութիւն յայտնելով հայ թատրոնը գաւառներում ժողովրդականացնող անփոխարինելի Վրոյրին։

Շեշտում ենք Վրոյրի աջողութիւնը, որպէս գրական միւս դերասանների համար, որոնք տարին մի անգամ գոնէ այցելութեան գալով մեր օտարախօս գաղութը՝ կը գտնեն ջերմ աջակցութիւն և կօգտվեն բարոյական այն տրամադրութիւնից, որ ստեղծեց նրանց համար պ. Վրոյրը։

Յարգելի դերասանը վաղը և եթ գնում է Սիմֆէրօպոլ նոյն նպատակով։ Ցանկանք նրան կատարեալ աջողութիւն և յուսանք, որ Սիմֆէրօպոլի մեր ազգայինները անուշադիր չեն թողնի մի հասարակական գործչի, որը խեղդելով իր մէջ Բագուի սպանդանոցի անձնական տպաւորութիւնները, պիտի հանդէս գայ նրանց հետ բոլորովին այլ տպաւորութիւններով...

Ար-Թոն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1½ թերթից։

—

«Մշակի» հետևեալ համարը, անցեալ տարվայ օրինակով, լոյս կը տեսնէ հետևեալ շաբաթվայ ուրբաթ օրը։

—

Մեզ հաղորդում են, որ Պետերբուրգում գտնվող կովկասեան պատգամաւորները մի մասնաւոր խորհրդակցութիւն կազմելով եկել են այն եզրակացութեան, որ կովկասեան գլխաւոր ազգերի ներկայացուցիչները պէտք է ամեն ջանք գործ դնեն հաւասարաչափութեան գաղափարը տարածելու և ամրացնելու։ Այդ պատճառով նրանք նպատակայարմար են ճանաչել կազմել Անդրկովկասում մի ժողով և խօսել երկրի ընդհանուր կարիքների մասին։

—

Բագուի քաղաքագլուխ Իրէցկի հաղորդեց ուղղավային, որ Բագուի պատգամաւորութիւնը, Պետերբուրգ գալուց յետոյ, դումայի յանձնարարութեան համաձայն, ներկայացաւ Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովին անձամբ շնորհաւորութիւն մատուցանելու նորին պայծառափայլութեանը Բագուի քաղաքի կողմից Կովկասի փոխարքայ նշանակվելու առիթով։ Կոմսը սիրալիր կերպով ընդունեց պատգամաւորութիւնը և շատ ուշադրութեամբ լսեց նրան։ Խօսակցութիւնը, գլխաւորապէս, յուզված երկիրը խաղաղացնելու մասին էր, և կոմսը մեծ ուշադրութեամբ հարցու փորձ էր անում ազգաբնակութեան տրամադրութեան մասին Կովկասում առհասարակ և, մասնաւորապէս, Բագուում։ Ապա կոմսն ասեց, որ ինք շատ լաւ հասկանում է իր առջև դրված խնդրի ահագին դժուարութիւնը, այդ պատճառով ինքն Կովկաս է գնում այն պայմանով, որ իրան կը տրվեն ամենալայն լիազօրութիւններ ժողովուրդը խաղաղացնելու և երկիրը վերակազմելու դործում։ Մի և նոյն ժամանակ կոմսը նկատեց, որ առաջին հերթական հարցը կը դնէ պարտաւորապէս զէմստվօ և երդուեալների դատարան մտցնելու հարցը, մի բան, որ երկար տարիներ աշխատում է ձեռք բերել Կովկասը։ Վերջում կոմսը խօսեց երկիրը բարեկարգելու համար փոխարքայութեան կից տեղական ոյժերից խորհրդակցութիւն կազմե-

լու հարցի մասին և աւելացրեց, որ նա հէնց յոյս է դնում տեղական հասարակական գործիչների օգնութեան վրա։ (Касп.)

—

Այն անորոշ, յաճախ վիրաւորական և անախորժ դրութիւնը, որի մէջ գտնվում են հայոց եկեղեցիների կրտսեր պաշտօնեաները, ինչպէս, օրինակ, տիրացուները և սարկաւագները իրանց վարձատրութեան և ռոճիկների ստացման վերաբերութեամբ, վաղուց յուզում է հոգևոր դասակարգի այդ պաշտօնեաներին և նրանք մի քանի անգամ ժամանաւոր կերպով խորհրդակցել են իրանց վիճակի բարւոքման մասին։ Այժմ նրանք մշակել են մի ծրագիր, որ և ներկայացրել են Թիֆլիսի Թեմի առաջնորդի քննութեան և բարեհայեցողութեան։ Ծրագրի մէջ փորձ է արված սահմանելու վարձատրութեան չափեր պաշտօնեաների համար և միևնոյն ժամանակ բարձրացնել այդ պաշտօնեաների մտաւոր և բարոյական ցենզը։ Առաջնորդը համակրութեամբ լսել է խնդրատուներին և խոստացել է նրանց խնդիրքը քննելու առաջիկայում։

—

Նորաբաց տպագրական գործիչների ընկերութեան վարչութիւնը, լսելով Մ. Զաքարեի առաջարկը, որոշել է մայիսի 8-ին գումարել ընդհանուր ժողով, քննելու մի շարք հարցեր՝ վերաբերեալ տպագրական խօսքի դրութեանը Կովկասում, նրա կարիքներին և տպագրական գործիչների աշխատանքի պայմաններին։ Վարչութեան նախագահ Վ. Կօրգանով պէտք է մշակէ առաջիկայ ժողովի ծրագիրը և պատրաստէ յատուկ զեկուցում։

—

Նոյն վարչութիւնը որոշել է մայիսի 9-ին կազմել գրական-երաժշտական մի առաւօտ Շիլլերի յիշատակին նրա մահվան հարիւրամեակի առիթով։ Ցերեկոյթը տեղի կունենայ Արտիստական ընկերութեան դահլիճում։

—

Ստացանք Զատկական տօներին աղքատներին բաժանելու համար. 1) Մկրտիչ Բարխուդարեանից 5 ր., 2) Բաթումի մի խումբ դերձակ աշխատաւորներից Մ. Տէր-Յարութիւնեանի ձեռքով հաւաքած 6 ր. 20 կ.։

—

Պաշտօնական ստատիստիկայի թւերի համաձայն, առ մէկն յունվարի 1904 թւի Անդրկովկասում հաշուում էր 6,254,196 մարդ, այդ թւում 3,381,790 տղամարդ և 2,872,406 կին։ Նահանգների և շրջանների վրա ազգաբնակութեան թիւը դասաւորվում է հետևեալ կերպով։ Բագուի նահանգում—1,015 912, Բաթումի շրջանում—161,491, Դաղստանի շրջանում 649,908, Ելիսավետպոլի նահանգում—935,810, Զաքաթալի շրջանում—96,970, Կարսի շրջանում—302,260, Քութայիսի նահանգում—854,211։ Սուխումի շրջանում—120,728, Թիֆլիսի նահանգում—1,086,895, Զէրնօմօրեան նահանգում—101,372, և Երևանի նահանգում—928,639 հոգի։

—

Ստացանք Զխար գիւղի հրկիզեալների օգտին 1) Քութայիսում կայացած հայոց սիրողների ներկայացումից զուտ արդիւնք տիկ. Եղիսաբէթ Ստեփանեանի միջոցով 88 բուբլի, 2) Նիժ գիւղի (Նուխու գաւ.) ուտիսխոս հայ լուսաւորչականներից նոյն գիւղի 4 եկեղեցիների քահանաների օգնութեամբ 18 բուբլի 94 կ.։ Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 1937 ր. 29 կ.։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են։ «Վերջին օրերս քաղաքիս բոլոր առևտրականների մէջ կարգադրութիւն է եղած կիրակի օրերին խանութները ամբողջ օրը փակելու։ Արդէն մը գավաճառները և «բախալները» մի քանի կիրակի է, որ փակում են, միայն հերթով մի երկուսն են բաց մնում։ Վերջին կիրակին էլ ընկեցին փակել մանուֆակտուրային առևտրականները և մանրավաճառները։ Արհեստաւորներն էլ, ընդհանուր սովորութեան համաձայն, այդ օրերին միշտ փակում են. մնում են ուրեմն միայն բաց գինեաները և սրճարանները»։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են. «Քաղաքումս թէ հեծեալ և թէ հետևակ զօրքերի մեծ բազմութիւն է հաւաքվել. մեզ մօտ առանց այն էլ թանգութիւն էր կենսական մթերքների, իսկ այժմ առաւել մեծ թանգութիւն է տիրել»։

—

ՍՏԱՎՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Այստեղ էլ հոգեհանգիստ կատարվեց գաղափարի հերոս Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին։ Հոգեհանգստից առաջ տեղական միջնակարգ դպրոցների հայ ուսուցիչներից մէկը համառօտ կերպով խօսեց հանգուցեալի մասին։ Սակայն ժողովուրդ քիչ կար եկեղեցում,—որքան սովորաբար լինում է կիրակի օրերը, որովհետև վաղօրօք յայտնված չէր հոգեհանգստի մասին։ Այդպիսի հանդէսները ոչ մի դաստիարակչական նշանակութիւն չեն կարող ունենալ, կը մնան լոկ մեռած ծէս»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Կիրակի, ամսիս 3-ին, ժամանակաւոր գործակալ Նահապետ վարդապետի նախագահութեամբ տեղի ունեցաւ ծխական ժողով, որի նպատակն էր մի նոր քահանայացուի ընտրութիւնը տեղիս եկեղեցու համար։ Առաջարկված էին երկու թեկնածուներ՝ Մ. Ղազարեան և նոյն եկեղեցու սպասաւոր սարկաւագ Շալամեանը, որոնցից առաջինը բացարձակ և միաձայն քուէարկութեամբ ընտրվեց քահանայացու։ Մինչև այսօր չիրականացաւ այն հոգեհանգիստը, որը պատրաստվում էր ի յիշատակ հանգուցեալ երաժիշտ Մ. Եկմալեանի։ Շաբաթ, ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին, ըստ լուրերի սպասվում էր այդ հոգեհանգիստը եկեղեցական երգեցիկ խմբի կողմից, որը այդ օրը, առաջին անգամ աջող և մեծ ոգևորութեամբ երգում էր հանգուցեալի քառաձայն խաղն պատարագը սիրող օրիորդների մասնակցութեամբ։ Սակայն ձրքան եղաւ խմբի և հոգեհանգստի առիթով հաւաքված աղօթողների զարմանքը, երբ հանգստեան շարականներից յետոյ փոխանակ Եկմալեանի, պատարագիչ քահանան յիշեց մի ուրիշի անունը։ Աւելի քան Պետերբուրգի եկեղեցին է երախտապարտ Եկմալեանցին, որը թէ իր ուսանող և թէ ուսուցիչ ժամանակը ահագին աշխատանք է գործ դրել նրա կանոնաւոր խմբական կազմակերպութեան համար և որի գոյութիւնը մինչև այսօր էլ շարունակվում է»։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Ամսիս 3-ին տեղիս հասարակական ակումբում դպրոցի օգտին հայ սիրողները ներկայացրին Գ. Սունդուկեանի «Էլի մէկ զոհ» կօմեդիան։ Հայ հասարակութիւնը, որ այնքան ոգևորված յաճախում է զանազան երեկոյթներ և պարահանդէսներ՝ չէր բարեհաճել ներկայ գտնվելու։ Էլ չեմ խօսում մեր բուրժուաների մասին, որոնք ամեն մի հայկական բանի, լինի այդ երեկոյթ թէ ներկայացում, «fi donc»-ով են վերաբերվում։ Ներկայացումը ընդհանրապէս անցաւ բաւարար»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառական գործակատարների դրութիւնը ընդհանրապէս չափազանց աննախանձելի է։ Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի գործակատարները որոշ չափով բարելաւեցին իրանց դրութիւնը՝ մի շարք պահանջներ հանդէս բերելով։ Հետևելով նոյն օրինակին՝ կիրակի, ամսիս 10-ին, տեղական գործակատարները մի ժողով գումարեցին, ուր որոշվեց ամսիս 17-ին՝ Զատկի կիրակի օրը, ներկայանալ ամբողջ կազմով նահանգապետին, շնորհաւորել ս. Յարութիւնը և յայտնել իրանց պահանջները»։

—

ՍՏԱԻՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Այս տարի այստեղի դպրոցական կեանքը նոյնպէս խախտվեց, ինչպէս Կովկասի և Ռուսաստանի շատ քաղաքներում։ Արական գիմնազիայի աշակերտները անկարգութիւններ սարքեցին, դպրոցական շէնքի պատուհանները, կարասիները ջարդեցին։ Ոստիկանութիւնը և զօրքը միջամտեցին, ապա նահանգապետը կարգադրեց, որ երկու շաբաթով ընդհատեն ուսումը քաղաքի բոլոր ուսումնարաններում։ Դիրեկտորը հեռացաւ, և ապա միայն սկսվեց ուսումը։ Վերջերս էլ նոյն գիմնազիայի պանսիօնում և ապա օրիորդաց գիմնազիաներից մէկում մի վտանգաւոր հիւանդութիւն երևաց—մենինգիտ, կամ ուղեղի մաշկերի, փառերի վարակիչ բորբոքում (meningitis cerebro—spinalis epidemia), որը, ինչպէս ասում են, առաջանում է հոգեկան ցնցումներից։ Բժշկական ժողովը վճռեց բոլոր աշակերտներին արձակել և դպրոցական շինութիւնները ախտահանել. ուստի հոգաբարձուի կարգադրութեամբ մի շաբաթ առաջ ուսումը դադարեց։ Մեռել են երեք աշակերտ, որոնցից մէկը հայ, և երկու աղջիկ. մի քանի էլ հիւանդ կայ։ Սակայն յոյս կայ, որ ձեռք առած արմատական միջոցների շնորհիւ, հիւանդութիւնը չը տարածվի։ Ասում են, որ մենինգիտ հիւանդութիւնը երևացել է նաև արևմտեան նահանգներում։—Վերջերս այստեղ երկու անգամ պարսիկներ բնակվեցին հազարաւոր փաթիզներով։ Մենք վաղուց գիտենք մեր հարևանների ոչ—պլատոնական սէրը դէպի զէնքը, բայց վերջերս նրանք առանձնապէս սիրում են «աքաղաղներ» ձեռք բերել, «կարմիր աքաղաղներ»...»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, մարտի 25-ին

Ամբողջ Ատրպատականում համարեա թէ չը կայ մի գաւառ, մի ուրիշ վայր, որ այնքան ցաւ ու տառապանք ունենայ, որ անընդհատ ենթակայ լինի անվերջ նորութիւնների՝—որքան Սալմաստ գաւառը։

Անցեալ 1904 թւի գարնանից սկսած Սալմաստը ենթակայ էր մի շարք պատահարների, որոնք յաջորդաբար ահագին վնասներ պատճառեցին ժողովրդին.—քրդական արշաւանքներն ու թալանները, սարբազների գալը (որոնք անիրաւաբար յափշտակում էին տեղացիների հալալ վաստակը, կեղեքում, թալանում էին պատահածին, առանց պատժվելու), թրթուրը, որ վնասեց այգիներին և սալմաստցին կարօտ մնաց շատ պտուղների ձևն անգամ տեսնելու, մորեխը, որ բարեբախտաբար ուշ հասաւ և ոչնչացրեց մի քանի տեղի բոստաններ և վերջին քաղի առուոյտը. յիշածներից յետոյ եկաւ խօլերան, որի հունձը այնքան առատ չեղաւ այստեղ, որքան Թէհրանում, Թաւրիզում և այլ տեղերում։

Այդ բոլոր պատահարների վերջակէտը սրիկայ քիւրդ Հասէնն էր, 20—25 տարեկան մի յանդուգն երիտասարդ (Զաֆար-Աղայի մարդկանցից)։ Դա իր նման մի քանի տասնեակ ընկերներով ասպատակում է այս ու այն կողմը, առաւելապէս կտրում էր Սալմաստից դէպի Խոյ և Ռուսաստան տանող ճանապարհները և թալանում անց ու դարձ անողներին։ Նա յայտնի էր իբրև մի քաջարի և կատաղի աւազակ, որ չէր յարգում ոչ մի սրբութիւն և այդ պատճառով ընդհանուր ահ ու սարսափ էր տարածել Սալմաստի հայ և թուրք բնակչութեան վրա։ Բայց բախտը մինչև վերջը չը ժպտաց նրան. Խոյի «դեպուտատ»-ում մի քանի անցորդների կողոպտելու նպատակով նա կռիւ բռնվեց ճանապարհորդների հետ և ընկաւ կուռվի անողոք գնդակից։

Վրա հասաւ ձմեռը, ըստ երևոյթին ամեն տեղ խաղաղութիւն տիրեց. ժողովուրդը ժամանակաւորապէս իրան ապահով զգաց, նա ազատ շունչ քաշեց, բայց այդ «ազատ շնչի» մէջ էլ մի «ախ» ի շեղտ կար, որի դէմ ժողովուրդը անզօր է հանդիսանում կռուելու, որովհետև չէ կարողանում գործել միաբանութեամբ։

Ներկայ սարփարաստը, երբ առաջին անգամ ոտք կոխեց Սալմաստ, ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողեց բոլորի վրա։ Մի առ ժամանակ ապրած լինելով Ֆրանսիայում, շփված լինելով քաղաքակիրթ աշխարհի մարդկանց հետ, բնական է, որ պէտք է իր հայեացքներով, իր սկզբնական բռնած լաւ դիրքով լաւ էլ տպաւորութիւն թողնէր ժողովրդի վրա։ Մի քանի դէպքեր, սպանութիւններ, գանգատներ, բողոքներ տեղի ունեցան, որոնք նախկին սարփարաստի օրով չէին վերջանայ հարիւրաւոր թումաններով, իսկ այդ նորեկ սարփարաստը վերջացրեց առանց որ և է տուգանքի. երևոյթը արտասովոր էր, փաստը չը տեսնված. և ժողովուրդը շատ գոհ եղաւ այդ դէպքերից. շատերս էլ կարծեցինք, որ երևի իբրև փոքր ի շատէ կրթված մարդ թոյլ չէ տալիս իրան անիրաւացի կերպով սրան ու նրան տուգանքի ենթարկել։ Սակայն անցան մի քանի ամիսներ և մենք բոլորովին հիասթափվեցանք։

Նախկին սարփարաստը, որ մի կատաղի և անգութ մարդ է ճանաչված (այժմ Ուրմիի սարփարաստն է) շատ խնդիրներ վերջացնում էր 2—3—5—10—15 թումաններով, մի քիչ ծանրակշիռ խնդիրների համար միայն առնում էր 30—50 թուման, իսկ այս կրթված համարվողը, բարեխիղճ ճանաչվողը իր ցուցակից ջնջել է 1—50 եղած բոլոր թւերը։ Սրա ամենաքիչ և ամենաթեթև տուգանքը համարվում է 50 թուման։ Նա առանց խրդ ճահարվելու առնում է ով իր ձեռն է ընկնում, ով դժբախտութիւն է ունենում ոտք կոխելու քեարգիւզարի շէմքը։

Որպէս զի աւելի ճիշդ գաղափար կազմէք այդ պաշտօնեայի անփոյթ տուգանքների մասին, աւելորդ չեմ համարում առաջ բերել մի փոքրիկ ցուցակ տուգանքների, որ նա առել է նոյեմբերից մինչև այս տարվայ մարտ ամիսը։

Հաֆտուանի	հասարակութիւնից	250	թուման
Սաւրայի	»	80	»
Սարամէրիկի	»	450	»
Մահլամի	»	250	»
Ալօշի	»	55	»
Մահտեսի Հախվերդեան Խաչօից		60	»
Յովակիմից (մահլամցի)		350	»
Թաթոսից	»	50	»
Ղասաբ Յովակիմից (ղարասարցի)		60	»
Հասրաթեան Գրիգորից		140	»
		120	»

Եւ այդ բոլորը առել է ընդամենը հինգ ամսում. այս ցուցակի մէջ չեն յիշված մի քանի ուրիշ գիւղերի տուած տուգանքները, որոնք առնուազը 5—600 թուման կը լինեն, չեն յիշված յիշած գիւղերի մասնաւոր անհատներից առած փոքրիկ գումարները, որոնք 200 թումանից պակաս չեն լինի. ի նկատի ունեցէք, որ առաջ բերված տուգանքների թւերը համարեա թէ ճիշդ են, գուցէ ընդհանուրի մէջ մի 50 թուման աւել պակաս լինի գրված։

Եւ այդ մօտ 2500 թումանը (մօտ 400 բուբլի) նա կորզել է ժողովրդից այդ շատ կարճ միջոցում, առանց մի օրինաւոր դատ վերջացնելու, առանց մէկ կողմին օրինական ճանապարհով բաւարութիւն տալու։

Սարփարաստի հետ միացած է տեղական դատաւորը (Շահզադէ) և հեռագրատան կառավարիչը. ես դեռ չեմ յիշում վերջին երկուսի առածները, մանաւանդ դատաւորինը (թուրքերից) որ—ինչպէս ասում են—10,000 թումանից աւելի է։

Ժողովրդի համբերութեան բաժակը լցվել է։ Թուրքերը բացարձակապէս մէջ տեղ են դուրս եկել և պահանջում են դատաւորին հեռացնել (Հեռագրատան կառավարչին հեռացնել են տուել). ցոյցերը հետզհետէ լուրջ կերպարանք են ստանում. մեծ բազմութիւններով համախմբվում են մզկիթներում և ընդհանուր աղմուկներ բարձրացնում դատաւորի անիրաւութիւնների դէմ։ Այսօր 5—6 օր է, Դիլմանի բոլոր խանութները փակ են և որոշել են բաց չանել, մինչև դատաւորի պաշտօնանկ լինելը. դատաւորը զինված պահակ է կանգնեցրել իր դրանը վախենալով ժողովրդի յարձակումից։

Իսկ սարփարաստը դեռ կակուղ-կակուղ կողոպտում է հայերին և ասորիներին, որոնք կարծես իբրև «ռայեա» տրամադիր են միայն կթվելու, ձայն ծպտուն հանելը կարծես մեղք են համարում։

Դժբաղդաբար այդ պաշտօնեաների անիրաւ վարմունքների մասին բարձրագոյն իշխանութեանը լիուլի կանոնաւոր տեղեկութիւններ չեն տրվում, կամ գուցէ և տրվում են, բայց ինչ-ինչ միջոցներով տեղ չեն հասնում. ապա թէ ոչ համոզված ենք, որ բարձր իշխանութիւնը—որ վաղուց մտածում է իր հպատակ ժողովրդի բարօրութեան և ապահովութեան մասին—թոյլ չի տայ, որ այդպիսի ցեցերը ծծեն ժողովրդի արիւնը, անիրաւութեամբ յափշտակեն նրանց քրտինքի արդիւնքը։

—

Հացի գինը օրըստօրէ բարձրանում է, բեռը այժմ ծախվում է 85—90 ղռանով (10 պուդը 13—14 բուբլի), որ շատ շատ թանգ է համարվում այստեղ։ Ցորենի թանգանալը արհեստական է. շատ շատ գիւղերում տասնեակ հազար պուդ ցորեններ կան, բայց մէջ տեղ չեն բերվում. ցորենատէրերը, այդ վաշխառու արարածները, սպասում են, որ մի քանի թուման աւելի թանգանայ—կամ աւելի ճիշդ արտայայտած—«սովի» տարի համարվի և այնպէս ծախեն բեռը 15—20 թումանով։

Անբարեխիղճ արարածներ...

***

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ՊՈՐՏԱԿԱԼ ՈՒՐԹԻՆ

13 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ի Ֆանտէրիայի գեներալ Լինէվիչի հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1905 թւի ապրիլի 13-ից. «Ապրիլի 10-ին մոր հեծելազօրքը Ցինցզիտունի մօտ կռիւ բռնվեց հակառակորդի հետ։ Կռիւը տևեց ցերեկվայ 3 ժամից մինչև 6 ժամը։ Հակառակորդը սարսված էր նահանջել»։

ԼՕՆԴՕՆ։ «Դէյլի Գրաֆիկ» լրագրում տպվեց այն յօդուածների առաջին սերիան, որոնց մէջ մատնացոյց է արվում, որ 15 անդրլիական զրահակիրներ կատարելապէս ան-

պէտք են պատերազմական գործողութիւնների համար։ Հեղինակի խօսքով, պարզվեց, որ 12 դիւյմանոց թնդանօթները, որոնք կազմում են անգլիական նորագոյն ամենամեծ զրահակիրների զինաւորութիւնը, չեն կարող մինչև անգամ 50 անգամ կրակ անել։ 6½ դիւյմանոց թնդանօթի ամենանոր նմուշը նոյնպէս չը դիմացաւ փորձի։ Լուրջ հարց է ծագում ամբողջ անգլիական նաւատորմի զինաւորութեան պէտքականութեան ստիճանի մասին։

ԱՅԱՋՅԻՕ։ Եկաւ զօսանաւը անգլիական արքայական զոյգով։

ՊԱՐԻԶ։ Հայֆոնգից Մարսէլ բերվեց այն ճառի ընագիրը, որ արտասանեց ընդհանուր նահանգապետ Բօ Վինգէ-Անամ երկաթուղու գիծը բանալու ժամանակ։ Բօ հաստատում է, որ Հնդկա-Չինաստանի պաշտպանութեան նախապատրաստումը կառավարութեան մշտական հոգածութեան առարկան է։ Շնորհիւ անգին պաշտպանողական աշխատանքների, որ կատարվել են ծովափի վրա, պաշտպանութիւնը նշանաւոր կերպով բարւոքված է։ Հնդկա-չինական զօրքը խիստ մեծացրված է։ Սայգոնի շարժուն պաշտպանութիւնը ներկայումս կատարելապէս կազմակերպված է։ Ֆրանսիայի ծովային ոյժերը Հեռաւոր Արևելքում բաղկացած են ամենաժամանակակից սարքի ռազմական միաւորներից։ Բօի խօսքով, Չինաստանի գործունէութեան եղանակը պէտք է վստահութիւն ներշնչէ։

ՇԷՐԲՈՒՐԳ։ Նաւահանգստային իշխանութիւնները հրահանգներ ստացան պատրաստութիւններ տեսնել սպանիական թագաւորին ընդունելու համար։ Ընդունելութիւնը կը կազմակերպվի այն ծրագրով, որ նման կը լինի թագաւոր Կայսրին դիմաւորելու ծրագրին։ Լուրէն և թագաւորը հիւսիսային ամբողջ էսկադրայի նաւատես կը կատարեն։ Յունիսի առաջին թուերին սպանիական և անգլիական էսկադրաները կը գան Շէրբուրգ։

ՎԻԵՆՆԱ։ «Ստանդարդ» լրագրի խօսքով, Կրետէն միացնելու կողմը կանգնած կուսակցութեան յոյսերը անիրագործելի են, որովհետև Կրետէի չորս հովանաւորող պետութիւններն արդէն վճռել են կատարելապէս մերժել որ և է միջնորդութիւն դրա մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ինֆանտերիայի գեներալ Լիխնովսկի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1905 թուի ապրիլի 13-ից. «Զախ թևի վրա առաջապահ զօրաբաժինները ապրիլի 9-ին շարունակում էին շարժումը։ Նրանցից մէկը լեռնանցքի վրա 10 վերստ դէպի հարաւ-արևմուտք Շիմեաոտզիից ամսի 10-ին հակառակորդի յարձակմանը թարկվեց։ Յարձակումը յետ մղվեց կրակով և թշնամին հեռացաւ դէպի Պայզեացզի գիւղը։ Մի ուրիշ զօրաբաժնի առաջապահ հեծեալ զօրամասերը Խամալին և Դավանզուլին լեռնանցքների վրա հրաձգութիւն ունէին Ուֆանլօուհեռացած հակառակորդի ոչ-մեծ հետևակ զօրամասերի հետ։ Ապրիլի 10-ին մեր հեծեալզօրամասերը գրաւեցին Սէմէնպու գիւղը և Ուֆանլօու։ Բանակի ճակատի վրա, 4—5 վերստ հեռաւորութեամբ չը հասած Կայիւանանին, եապօնացիները արտիլերիայի կրակով դուրս մղվեցին մերձակայ գիւղի խրամատներից։ Հակառակորդը նահանջեց դէպի հետևի գտնվող կուրգանը։

ԱԹԷՆՔ։ Միջազգային զօրաբաժինների հրամանատարը Կրետէում ստիպեցին հանել ամեն տեղ յունական դրօշակները, որ նորերս բարձրացրել էին միացման կողմնակիցները և փոխարինել կրետական այն դրօշակներով, որոնք պաշտպանվում էին միջազգային զօրքերի զօրամասերով։ Այդ միջոցը նշան են համարում, որ պետութիւնները վերջնականապէս մերժելու են միացումն։

ԿԱԶԱՆ։ Վոլգայով անցան առաջին շոգենաւերը։

ՎԱՐՇԱՎԱ։ Լուրեր են տարածվում, որ փողոցային անկարգութիւններ են պատրաստվում մայիսի 1-ին—3-ին։ Բնակիչների խոհեմ մասը լուրերին նշանակութիւն չէ տալիս։

ՏՕԿԻՕ։ Զինաթափ եղած ռուսական ականանաւերը Զիֆուի մէջ շարունակում են հեռանալու պատրաստութիւններ տեսնել։ Եապօնական կառավարութիւնը եռանդուն բողոք ներկայացրեց չինական իշխանութիւններին։

ԼՕՆԴՕՆ Անգլիայում ամէրիկական նոր դեսպան Վայտլօբայդի նշանակման առիթով «Դէյլի Տէլէգրաֆ» լրագիրն ասում է. «Եթէ Անգլիայի և Ամերիկայի միջև գոյութիւն ունեցած տարաձայնութիւն, շատ կարելի է, որ Հեռաւոր Արևելքում այժմ մղվող պատերազմը կը սպառնար աւերումով Եւրոպային, բայց քանի որ Անգլիան և Ամէրիկան միասին կը գործեն և կարծիքների մէջ հատաձայն կը լինեն, չէ կարող կօալիցիայի վտանգ ծագել, նման այն կօալիցիայի, որը զրկեց Եապօնիային Չինաստանի վրա ունեցած յաղթութեան պտուղներից, որի ուղղակի հետևանքն եղաւ ներկայ պատերազմը։ Երեքշաբթի տեղի ունեցած բանկէտին Վաշինգտօնի եապօնական դեսպան բարօն Կանէկօի ներկայութիւնը նոյնքան բնական էր, որպէս և բազմախորհուրդ։ Աղմկալի ծափահարութիւնները, որ առաջացրին ակնարկները այն ծառայութիւնների վրա, որ Եապօնիային ցոյց տուեց Մեծ-Բրիտանիան, որը աշխատում էր պահպանել զանազան երկիրների չեզոքութիւնը, նման այն բանի, որ նա անում էր այդ Ամէրիկայի համար սպանիական պատերազմի ժամանակ, կրկին անգամ ցոյց տուեցին Անգլիայի, Ամէրիկայի և Եապօնիայի շահերի իսկական նմանութիւնը։ «Տիեզերքի խաղաղութիւնը, ասաց բարօն Կանէկօ,—իսկապէս կախում ունի անգլօ-եապօնական դաշնակցութեան վերանորոգութիւնից»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 ապրիլի։ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհիներ Մարիա Ֆէօդորօվնա և Ալէքսանդրա Ֆէօդորօվնա Օգստափառ Երեխաներով ս. Հաղորդութիւնն ընդունեցին։ Նոցա Մեծութիւնների հետ հաղորդվեցին Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ, Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Ֆէօդորօվնա, Մեծ Իշխան Պավէլ Ալէքսանդրովիչի երեխաները և Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի երեխաները։ Ապրիլի 14-ին Մեծ Իշխանուհի Մարիա Պավլօվնա Ֆրէյլինա Օլիվի ուղեկցութեամբ այցելեց Ալէքսանդրովեան հիւանդանոցը։

Բագուի, Ելիսաւետպոլի և Երևանի նահանգների և Դաղստանի շրջանի մահմեդական ազգաբնակութեան պատգամաւորները ներկայացան Մինիստրների Կոմիտէի նախագահին և ստատս-սեկրետար Վիտտէին մի պէտիցիա մատուցին, որը պարունակում էր միջնորդութիւն՝ վերացնել մահմեդականների վերաբերմամբ գոյութիւն ունեցող բոլոր բացառութիւնները, սահմանափակումները և տալ նրանց ուրիշ ազգերի հետ համահաւասար քաղաքական, քաղաքացիական, կրօնական իրաւունքներ, թոյլ տալով կովկասեան մահմեդականների ներկայացուցիչներին մասնակցել փետրվարի 18-ի Բարձրագոյն րէսկրիպտով նախատեսված առանձին խորհրդակցութեան մէջ։ Ընդունելով պէտեցիան և լսելով բացատրութիւնները, Վիտտէ հաղորդեց, որ Կովկասը թանգ է նրա համար, որպէս կովկասցու համար և նա սրբատանց ցանկանում է ամեն բարիքներ այդ երկրին, մանաւանդ մահմեդականներին, որոնց հիմք չը կայ ուրիշ ազգերի հետ համանման իրաւունքներ չը տալու։ Այդ կողմից այժմ Կովկասը առանձնապէս բարեյաջող պայմանների մէջ է գրված, շնորհիւ կոմս Վորոնցով-Դաշկովի նշանակման, որը լցված է անկեղծ ցանկութեամբ խաղաղացնել երկիրը և նպաստել կուլտուրական սկզբունքների զարգացման նրա մէջ ի բարօրութիւն Կովկասի բոլոր ազգութիւնների։ «Խորհուրդ եմ տալիս Կովկասի բոլոր ժողովուրդներին համախմբվել փոխարքայի շուրջը, որից կախված է Կովկասի ապագան։»

ԲԵՐԼԻՆ։ Մայիսի 5-ին և 6-ին կը կայանայ միջազգային կոնֆերէնցիա՝ քննելու համար առևտրի ընդհանուր շահերը և միջոցներ ձեռք առնելու արգելքները վերացնելու համար միջազգային յարաբերութիւնների մէջ։ Կոնֆերէնցիային կը մասնակցեն Ռուսաստանը, Աւստրօ-Ունգարիան, Գերմանիան, Իտալիան, Շվէյցարիան, Բէլգիան, Նիդէրլանդիան, Ֆրանսիան, Անգլիան, Դանիան, Շվէցիան և Ամէրիկան։

ՍՕՖԻԱ։ Կատարելապէս սուտ է այն տեղեկութիւնը, թէ բուլգարական ապստամբները Մակեդոնիայում կոչեր են բաժանում։

15 ապրիլի

ՊԱՐԻԶ։ Գերմանական դեսպան Բագօլին ճաշ տուեց, որին հրաւիրված էին Ռուվիէ և դիպլոմատիական մարմնի անդամները։ Էդուարդ թագաւորի Պարիզ գտնվելու ժամանակ տեսակցութիւն կը կայանայ Դելկասէի հետ։ Էդուարդ թագաւորի այցելութեանը քաղաքամեծ նշանակութիւն է տրվում։—Հրատարակված է հեռագիր Միլանից, որի հատաձայն գերմանական դեսպանութեան կցորդը Հռոմում յայտնեց, որ ճիշդ չեն լուրերը Վիլհէլմ կայսրի առողջական անբաւարար դրութեան մասին։ Միջերկրական ծովով ճանապարհորդելու ժամանակ կայսրն անդադար աշխատում էր և շատ էր պարապում արտաքին քաղաքականութեան հարցերով։ Վերջում կցորդն ասեց, որ Վիլհէլմ կայսրը յոյս ունի փրկել երեքպետեան դաշնակցութիւնը, որը խախտվել է այժմ, և որ նա աշխատում է նախապատրաստել համաձայնութիւն աւստրիական կայսրի և իտալական թագաւորի հետ։

ՄԻՆՕԿ։ Հրէական զատիկը կատարելապէս խաղաղ անցաւ, ոչինչ ինցիդէնտներ չը կային։ Քաղաքում շրջում են զինուորների և կազակների ուժեղացրած պահակները։

ԹԱՒՐԻԶ։ Ուրմիա ժամանեցին ռուսական հոգևոր միսսիայի ներկայացուցիչները։

ՇԱՆԴՀԱՅ։ Հրդեհը լափեց Չինական ծովագնացական ընկերութեան պատկանող «Իւանվօ» շոգենաւը Տունչժօուում։ Երկիւղ են կրում, որ խեղդված լինեն նր վրա գտնվող 150 չինացիները։

ԲԵՐԼԻՆ։ Անգլիական թագաւորի այցելութիւնը Պարիզ զուրկ է որ և է քաղաքական նշանակութիւնից։ Էդուարդ թագաւորը սիրում է միշտ Պարիզ մնալ առանց քաշվելու։

Կ. ՊՕԼԻՍ։ Քաղցկէղից վախճանվեց սուլթանի եղբայր Քէմալ-Էդդին-էֆէնդին։ Բէշադ-էֆէնդին, որը թագաժառանգութեան օրէնքների համաձայն սուլթան Համիդի ժառանգն է հանդիսանում, նոյնպէս շատ հիւանդ է։ Ռուսաստանը և Աւստրիան առաջվայպէս միջազգային կոնտրոլի կողմնակից են ֆինանսական բէֆորմները մտցնելու համար Մակեդոնիայում։

15 ապրիլի

ԳՈՒՆՁԻՈՒԼԻՆ, 14 ապրիլի։ (Սեփ. թղթակցից)։ Ընդհանուր դրութեան մէջ փոփոխութիւններ չը կան։ Միաժամանակ մեր զօրաբաժինների առաջխաղացութեան հետ դէպի Կաիւանչէն և Զանտափու, ձախ թևի վրա շարժում սկսվեց թշնամու այն զօրամասերի դէմ, որոնք զետեղված էին Պաղզեադզէ-Տօուանգօու-Ուֆանլօու գծի վրա։ Մեր զօրամասերը կուով գրաւեցին այդ բոլոր գիւղերը, նոյնպէս և Սիմէնպու գիւղը։—Այսօր առաւօտանցաւ դէպի Գաղզեատան հաղորդակցութեան ճանապարհների մինիսարը։

ԼՕՆԴՕՆ, 15 ապրիլի։ Լուրջ ընդհարում տեղի ունեցաւ 200 իրլանդական ոստիկանների և Դէրսէյ փոքր կղզու ազգաբնակութեան Իրլանդիայի հարաւ-արևմուտքում։ Ոստիկանութիւն էր ուղարկվել դուրս քշելու համար մի զառամեալ ծերունու, որը հրաժարվել էր վճարել իր գրաւած բնակարանի վարձը։ Ազգաբնակութիւնը քարերով և հրաձգութեամբ դիմաւորեց ոստիկանութեանը։ Ոստիկանութիւնը գործ դրեց սուիններ։ Մի քանի բնակիչներ վիրաւորված են։

ԼՕՆԴՕՆ, 14 ապրիլի։ Անհաստատութեանը, որով ծովային ճակատամարտի էին սպասում ամենամերձաւոր ապագայում, այժմ սկսում է յաջորդել այն կարծիքը մամուլի մէջ, թէ իսկական ընդհարում Բօժէստվէնսկու և Տոգօի միջև կարող է ամենևին տեղի չունենալ։

ԿԱՄՐԱՆ, 13 ապրիլի։ Եկաւ ֆրանսիական կուանդնայ շոգենաւը մթերքների բեռով։ Կարծում են, որ նա կերթայ Հօնգկօնգ կամ Սինգապուր՝ էլի նոյնպիսի բեռ վերցնելու համար։ Հաղորդում են, որ բալտիական էսկադրան ապրիլի 12-ին ծովածոցից դուրս գալու ժամանակ բռնեց գերմանական երկու շոգենաւ կօնտրաբանդայի բեռով։ Այսօր ջօնկայից նկատեցին նաւերի մեծ քանակութիւն հօրիզօնի վրա։—Զորք օժանդակ կրէյսէրներ և մէկ հակա-ականնաւ ածուխի բեռ են վերցնում գերմանական շոգենաւերից Կամրանեան ծովածոցում։

ՏՕԿԻՕ, 14 ապրիլի։ Վէյհայվէյի չինական իշխանութիւնները անհանգիստ են լինում նաւահանգիստը մտնող նաւերի համար ծովափեայ փողոց շինելու բրիտանական նախագծի առիթով։ Նիւթը ստացվեց և տեղական բանտորներն եկան։ Չինացիները նայում են Վէյհայվէյի վրա որպէս ծովային յենակէտի, և ոչ թէ առևտրական նաւահանգստի վրա։ Եթէ Անգլիան ծովափեայ փողոց շինէ Վէյհայվէյում, այն ժամանակ Գերմանիան նոյն արտօնութիւնները կը պահանջէ Ցզինդաօում։ Տեղական իշխանութիւնները պնդում են, որ կառավարութիւնը Պեկինում աշխատանքների դադարեցում պահանջէ անգլիական դեսպանից։

ԼԻՒՏՏԻԽ, 15 ապրիլի։ Կայացաւ միջազգային ցուցահանդէսի փառաւոր բացումը Պալէրմօում։—Բարի գնաց «Հօհէնցօլէրն» կայսերական զրօսանաւը գերմանական կայսերական զոյգի հետ միասին։

ՀՌՕՄ։ «Տան» լրագրի տեղեկութիւնների համեմատ, Կրետէին հովանաւորող պետութիւնների ժողովը վճռից չը մտցնել նախագծված րէֆորմները, մինչև որ չը դադարէ ապստամբութիւնը կղզու վրա։

ՊԱՐԻԶ։ Այսօր բօրսայում կատարելապէս գործ չը կայ տարածված յոռետես լուրերի պատճառով, որ իբր թէ Ֆրանսիայի և Գերմանիայի միջև պատակտումն է ընկել մարօքէան գործերի պատճառով։ Պաշտօնական հերքման մէջ յայտնվում էր, որ այդ լուրերը հիմքից զուրկ են, որովհետև ոչինչ դիպլոմատիական ինցիդէնտ տեղի չէ ունեցել։ Հերքվում է նոյնպէս անգլիական ծագում ունեցող այն հեռագիրը, որ իբր թէ Թուրքիան մի յայտնի վարձատրութեան համար զիջել է Տրիպոլիսը Ֆրանսիական ընկերութեան, որը մեծ սենսացիա առաջացրեց Հռոմում։

ԼՕՆԴՕՆ։ Այստեղ պայմաններ են կապված էլի եօթ ածխատարներ վարձելու Բօժէստվենսկու էսկադրայի համար։ Գերմանական շոգենաւերը ներկայումս գտնվում են Հօնգկօնգում և չինական ուրիշ նաւահանգիստներում։ Մէկը գտնվում է եապօնական նաւահանգիստներից մէկում։ Կարծում են, որ նա կուզեորվի Սինգապուր եապօնական ածուխի բեռով, ոչ իբր թէ չինացի առևտրականի համար է։ Մնացած վեցից մի քանիսները գտնվում էին Վլադիվոստոկի ճանապարհի վրա, բայց չը կարողացան հասնել նշանակած տեղը պաշարման պատճառով։

ՆԻԺ. ԵՕՐԿ։ Ռուսաց կառավարութեան բանակցութիւնները պղպատային արդիւնաբերութեան դաշնակցութեան նախկին նախագահ Շվաբի հետ այն հետևանքն ունեցաւ, որ պայմանագիր կապվեց 16000 ոստն ունեցող կատարելապէս առանձին տիպի մի քանի զրահակիրներ կառուցանելու համար։ Այդ նաւերը, ինչպէս ասում են, կը զարմացնեն ամբողջ աշխարհը։ Նաւերի մեծ մասը կը կառուցվի Միացեալ Նահանգներում, իսկ մնացածները այն գործատանը, որը կը կառուցվի բալտիական նաւահանգիստներից մէկում ամերիկացու հսկողութեամբ։ Շվաբը երաշխաւորում է, որ այդ նաւերի կօէֆիցիէնտը 20%-ով աւելի զօրեղ կը լինի ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր պատերազմական նաւերից։

ՇԱԳՀԱՅ։ (Ցէնտրալ Նիւս)։ 10,000 տեղացիներ Բատանգում մի համախմբութիւն կազմեցին, յայտարարելով, թէ որովհետև Մեծ-Բրիտանիան կարող էր գրաւել Տիբէտը, ուստի հասել է այդ երկրի անկախութիւնը ձեռք բերելու ժամը։ Չինաստանից Սիչուանի փոխարքան զօրքեր է ուղարկում վերոյիշեալ շրջանը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ
14 ապրիլի

Բօրսայի դիսկօնտը	5½—6¾% »
Պետական 4% բենտան	83½ — »
I Խաղաք. տոմսերը	378½ — »
II » »	292½ — »
III » »	269¼ — »
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	— — — »
Բագուի » » »	— — — »
Թիֆլիսի հող. բանկի 5% . . .	— — — »
» » » 4½% . .	— — — »
Բագուի նաւթ. Ընկ. . . .	408— — »
Կասպիական Ընկ.	— — — »
Մանթաշեան և Ընկ.	215— — »
Նոբելի և ընկ.	10000— — »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ. Ճեմարանում սովորած
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ցանկանում է ընտանիքներում ունենալ հայերէն լեզուի դասեր։ Համաձայն է գնալ և ամարանոց, եթէ պայմանաւորվողի կողմից լինի այդ առաջարկը։
Հարցնել «Հերմէս» տպարանում. Մաղաթեան փողոց № 15. 1—3

Կովկասում տպագրական գործով զբաղված անձանց փոխադարձ օգնութեան ընկերութեան
ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
գտնվում է Թիֆլիսում, Տուրգէնէվսկայա փողոցի վրա, № 11 տան մէջ, և բաց է կիրակի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը։
1—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ո. կ. ե. հ.) 100—100

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Զիկովանի—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային

Մ. Գ. Ահեցիսեանց—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. Բաբանասեանց—11—19 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Գ. Ա. Թարխանեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. Սալովով առաջնայոյժ. 9—11 ժ.

Կին-բժիշկ Շերբինինա—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ա. Թարխանեանց—7½—8 ժ.

Գ. Ա. Արդանդեանի. կատարում է միկրո-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։

Օ. Ա. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ..

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Ս. Գ. Շերմազանեանց

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, լուսանկար Լալայեանցի բնակարան։

Բժիշկ Ա. Մխիթարեանց

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, սորթու և վեներական տխուր ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի, դեղատան կից։ (ա. օ.) 58—80

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՋՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելիամինովսկայա փողոց № 8։ (Ե.ո.) 73—100

Լոյս տեսաւ

ԻՇԽ. ԱԼ. ՍՈՒՄԲԱՏՕՎԻ

„ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ“

պիեսը հինգ արարուածով

հեղինակի պատկերով եւ յառաջաբանով

թարգմանեց

Ալ. Ծատուրեան

Գինն է 50 կօպ.

Դիմել՝ Թիֆլիս, «Մուրճի» խմբագրութեան. «Գուտենբերգ» գրավաճառանոցին և թարգմանողին՝ Москва, почтамтъ, до востребованія.

3—5

Մանկական հանդէս

Հինգշաբթի, ապրիլի 21-ին, Թիֆլիսի Ժողովարանի ձմեռային ընակարանում, յօգուտ

ՁԽԱՐ ԳԻՒՂԻ ՀՐԿԻԶԵԱԼՆԵՐԻ

կը կայանայ մանկական հանդէս բարեհաճ մասնակցութեամբ տ. Զաբէլի, պ.պ. Միրաղեանի, Տէր-Դաւթեանի, №№ և սիրողների։ ԽՕԼԵՐԱ, վոդզվիլ 1 գործ. հեղ. Յաբ. Թումանեանի, կենդանի առակներ, ձուլաղաղ, կախարդական սեղան սիւրպրիզներով և զանազան խաղեր։ Վերջը—մեծ կռիւ ծաղիկներով և կօնֆետտիով։

Մանրամասնութիւնները աֆիշներում։

Սկիզբը առաւօտեան ժամը 12-ին, վերջը երեկոյեան ժամը 6-ին։

Մուտքը երեխաների համար 30 կ. մեծերին 50 կ.։

Հանդէսի կարգադրիչներ՝

Իշխ. Մ. Թումանեան

և Մ. Մզարէուլեան

2—4

Կիրակի, ապրիլի 24-ին

ԹԻՖԼԻՍԻ ԱՄԱՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

յօգուտ

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան

լինելու է

ԶԲՕՍԱՆՔ

և բարեգործական վաճառք հետեւեալ ծրագրով.

I

ԶԱՆԳԻՒԼՈՒՄ

5-ից 6 ժամ։

II

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ—1) Լուբիկ, 2) Վարդ կօշիկս, 3) Զանգիւլում։

III

ՀԱՐՍԱՆԵԱՑ ՀԱՆԴԷՍ ՀԱՅ ԳԻՒՂՈՒՄ

7—8 ժամ։

Հայկական պարեր—1) Զիմ վզին. 2) Լէպո, լէ. լէ. 3) Յետ ու առաջ. 4) Ուղուն դարա. 5) Լէզգինկա, 6) Օյ, Նազան եմ. 7) Դուն արագիլ։

Մասնակցում են. պ. Մ. Կարա-Մուրզայի խումբը, աշուղ Զիւանին, Բագուի սազանդար «Արսէն և Ավանէսը» զուռնայի և զինուորական երաժշտական խումբը։

Մանկական խաղեր և պարեր։

Սկիզբն է ժամը 12 ին վէս օրվայ։

Մուտքն արժէ 40 կ., երեխաներից—20 կ. Եթէ անձրևային եղանակ լինի, զբօսանքը յետաձգվում է մայիսի 9-ին։

(16 21, 24,) 2—3

Լոյս տեսաւ

«ՀԱՅ ԽՕՍՔԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ»

տիտղոսով

Ֆոտոտիպական մի նկար, 40—50 սմ. մեծութեամբ, տպված երկչերա խաւաքարտի ամբողջ թերթի վրա։ Նկարը յօրինված է Մեսրովբեան գիւտի 1500 ամեայ հաղորդէպ յօբելինի պատեհութեամբ և պարունակում է մեր գրականութեան ուսուցիչներից 56 դէմքեր, սկսած՝ Մեսրովբ, Սահակ, Խորենացի, Նարեկացի, Շնորհալի և Համբրոնացիներից մինչև ժամանակակիցները։ Նկարը շրջանակված է հայկական ոճով մի լարեանկարից, որի մօտիվը վերցրել ենք Անիի քանդակներից։ Նոյն այդ շրջանակի մէջ երփներանգ ոսկեզօծութեամբ ընդելուզեալ կան 9 մանրանկարներ վանական և ճեմարանական հաստատութիւնների, ինչպէս և հայկական ամենահին երկաթագիր տառերի նմանութիւնը։

Ահա այսպիսի գուտ հայկական և յօբելիանի կատարելապէս պատշաճ, մեծադիր և գեղարուեստական մի յուշարձան, հատով արժէ միայն 1 ր. 50 կ., իսկ 20 և աւելիով վերցնողին հատը արժէ միայն 1 ր. 20 կ.։

Դիմել. Тифлисъ, Пушкинск. пассажъ, фототипія П. Мариміанъ.

Արհեստանոցումս վաճառվում են նաև հայ գրական և գեղարուեստական աշխարհի դէմքերով քաց նամակներ, 100-ը 2 ր. 50 կ., 1000-ը 20 ր.։ Ճանապարհածախսը մեզ վրա է, իսկ պատուէրի արժէքը պիտի ուղարկել կանխիկ։ (ա. օ.) 4—8

Բանքեր ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ վաճառվում է Ա. և Բ. գիրք միասին 4 ռուբլի իւրաքանչիւրը 2 ր. 50 կ., դիմել՝ С. Петербургъ, Собининскій пер. д. № 5. Арташесу Агабабяну կամ Թիֆլիս Գուտենբերգ գրավաճառանոցին։ Բաժանորդները դիմեն հրատարակչին Норск. (Ярос. губ.) Араму Меликяну. (հ. շ.) 5—10

ՁԱՏԿԻ ՆՈՒԷՐ

տալու ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-ի գրքեր.

1) Ժամանակը ոսկի, պատկերազարդ, 164 էջ, 40 կօպ։ 2) Շեն բազաւոր 20 կօպ։ 3) Ծովինար 20 կօպ։ 4) Երկու աղբեւացեղ 30 կօպ։ 5) Հէքեաթներ, 138 էջ, 30 կօպ։ 6) Փոքր գրուածներ, 160 էջ, 40 կօպ։ 7) Ասուած աղքատի կերպում 20 կօպ։ 8) Ասուած չնանաչող 10 կօպ։ 9) Անմեռ աշխարհ եւ հողածին 8 կ։

Հարցնել Թիֆլիսի գրավաճառների մօտ. հեղինակին դիմողները (Ներս. դպրանոց) ճամբաճախս չեն վճարում։ Բոլորը միասին կազմած արժէ 2 ռուբլի։ (հ. կ.) 8—10

Նաւթային պահեստ **„ՏԻՐԱՆ“** վաճառվում է կերօսին, մազութ, բենզին, գուդրոն, սմալա գազօվի, կիսլատա, կալեօսնի մազ, Սուրխանի նաւթ, Պարսկաստանի ամեն տեսակ չոր մրգեղէն։

Баку Б. Морская ул., домъ Маилова, телефонъ № 826. Տ. Ե. Միքաէլեանց

(կ. Ե. հ. շ.) 4—4

Այս յայտարարութիւնը տպված է «Правитель. Вѣстникъ»-ի № 43/1903 թ.։

Զգուշացէք կեղծումներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ

Դեղագործ

Ի. Ֆ. ԻՐԳԷՆՍԻ

Ոչնչացնում է պզուկները, այրվածքները, դեղին բծերը, ուռոյցքները և ազդում է աւելորդ քրտնաբերութեան վրա. ոչնչացնում է վատ հոտը։ Ցանձնարարվում է իբր տուալէտի անուշահոտ սապօն բարձրագոյն տեսակի։

Ոսկի մեդալ Լօնդոնում 1893 թ.

Կտորի գինը 50 կ., ½ կտորը 30 կ.։ Ծախվում է բոլոր ամենալաւ դեղատներում, դեղապահեստներում և անուշահոտութիւնների խանութներում։

Բոլոր Ռուսաստանի համար գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ (4, 19) 7—24

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ամենքի, որ ներկայ ապրիլի 25 ին, ցերեկվայ ժամը 12-ին ինքը նշանակել է աճուրդ կապալով տալու քաղաքային հողերի մի հողաբաժին 600 քառակուսի սաժէն, որ գտնվում է 10.դ քաղաքամասում, Թիֆլիսի մաքսատան դիմացը։—Ցանկացողները կարող են պայմանների հետ ծանօթանալ բոլոր զբաղմունքի օրերում ցերեկվայ ժամը 9½—2½-ը 4-դ բաժանմունքում։

Լոյս տեսաւ և ապրիլի 1-ից կը վաճառվի

Գ. ՄԱՆՏԵԳԱՑՑԱՅԻ

«ՀԻԱՆԴ ՍԷՐ»

Առողջապահական վէպի Բ. տպագրութիւնը։

Գինը 40 կօպէկ

Զեղչ՝ գրավաճառներին 25%, կանխիկ 30%։

Մայիսի 1-ին լոյս կը տեսնեն

Ֆ. Վ. Բելօրուս

«ԹԱՓԱՌԱԿԱՆ ԲՈՒՂՂԱՐ»

Պատմուածք բալկանեան ապստամբութիւնից

Ա. Օսիպով

«ՄԻ ԱՄԻՍ ԿՕՆՍՏԱՆԴՆԱՊՕԼՍՈՒՄ»

Ճանապարհորդական տպաւորութիւններ 1896 թ. հայկական սարսափներից

Մատթէոս արքեպ. Իզմիրլեանի պատկերով.

Դիմել թարգմանչին՝ Александрополь, священнику Ерванду Налбандяну. (Ե.շ. 4—6

Զարջուի հայոց աղօթատան համար հարկաւոր է մի

ՍՊԱՍԱՒՈՐ

որ ունենայ աջող ձայն և հմուտ լինի ժամերգութեան. գերադասութիւն կը տրվի միջնակարգ կրթութիւն ունեցողներին։ Տարեկան կը ստանայ 500 ռուբլի, որից 240 ռուբլին ռոճիկ, մնացածը արդիւնք։ Դիմել՝ Гор. Чарджуй священнику Нерсесу Абраамянцу.

3—4

Պատրաստում

և պարապում ենք բոլոր միջնակարգ դպրոցների բոլոր առարկաներից. կարելի է և գիշերօթիկ։ Աւչալեան փող., տուն 53, ուսանողներ՝ Հ. և Կ. (Ե. հ. կ.) 14—15

ԴԷՊՕ

ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Եղբ. Յակոբջանեանցներ եւ Սարգսեանց“

Պատրաստի հագուստեղէնի խանութում (Միքայէլեան կամուրջ, Քամոյեանի տուն № 25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների համար ամենավերջին ամառվայ սեզօնի տարազով պատրաստած հագուստներ։

Գները չափաւոր են և առանց սակարգութեան։ (շ. հ.) 35—100

Ի. Ե. Գայամակին եւ Ընկ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Պատիւ ունի յայտնելու յարգելի հասարակութեանը, որ ինքը ձեռք է բերել Գ. Ի. Պալլիզէնի թղթի գործարանի ակցիօներական ընկերութեան վարչութեան, Ռօկեվսկու թղթի գործարանի ընկերութեան և Կօշելեվսկիների գործարանների ընկերութեան Անդրկովկասի բոլոր պահեստներում ունեցած ապրանքները։

Բացի դրանից Առևտրական Տունը ներկայացուցիչ է Ֆինլանդական լաւագոյն գործարանների—Կիմմենե Կուզանկօվսկու և Վօյկա ընկ., որ մշակում են պօստային, գրելու, տպագրութեան, ալբոմի և ուրիշ տեսակ թղթերի բոլոր տեսակները՝ տարեկան 60000«0 ռուբլուց աւելի գումարի. նոյնպէս և ռուսական գործարանների—Գորբատսկու, Սպասօբինի և Կրասնոյի թղթի գործարանների ընկերութիւնների, որոնք մշակում են պօստի, գրելու և այլ թղթերի ամենալաւ տեսակները, և Ն. Ն. Բռակերի թղթի գործարանի, որը մշակում է փաթաթելու թղթեր։ Ցանձնարարելով վերոյիշեալ գործարանների թղթերը, խնդրում եմ յարգելի գնողներին դարձնել իրանց բարեհաճ ուշադրութիւնը և յարգել մեզ իրանց պատուէրներով, որոնք կը կատարվեն ճշդութեամբ և լիակատար բարեխղճութեամբ։

2—10 (Կ.) Թիֆլիս, Գօլովինսկի պրոսպէկտ, տուն Մանթաշեանի

ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ

КОМПАНІИ ЗИНГЕРЪ

Необходимы для домашняго употребленія. Образцовы въ конструкціи и исполненіи. Продаются только въ магаз. Комп. Зингеръ.

Отпускъ машинъ съ платежемъ **отъ 1 рубля въ недѣлю.**

Безплатное обученіе шитью и модным художественнымъ вышивкамъ.

Остерегайтесь поддѣлокъ!

Ручныя машины съ высокимъ рукавомъ во всѣхъ нашихъ магазинахъ отъ 25 руб.

Болѣе 1200 собственныхъ магазиновъ по всей Россіи!

Магазинная вывѣска
Рисунокъ утв. Отд. пром. и торг.
М. Фин.

THE SINGER MANFG. CO.
TRADE MARK
фабричное клеймо которымъ снабжены машины.

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԶԻՆԳԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վաճառվում են միայն Ընկերութեան սեփական խանութներում։ Աւելի քան 1200 խանութ Ռուսաստանի Կայսրութեան ամեն քաղաքներում։ Խանութները ճանաչվում են Ռուսաց «3» տառը ձեակերպող ցուցանակներով, հատաձայն ֆիրմանների վինիտար.—Արդիւնաբեր. և Առևտր. բաժնի հաստատած նկարին։ Զգուշացէք կեղծիքներից.

Մեքենաները տրվում են սկսած շաբաթական 1 ռուբլի վճարից։ Կ. 4—25

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го апрѣля 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мад. ул. № 15.